Տիրամոր Կանթեղ

ԱՇՈՑՔԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԸ

Ա. Սեպտեմբեր, 2020

---

*Սիրելի՛ հավատացյալներ, այս թերթը Աշոցքի տարածաշրջանի հայ կաթողիկէ հինգ համայնքների՝ Մեծ Սեպասարի, Ղազանչիի, Սիզավետի, Բավրայի եւ Սարագյուղի համար է եւ իր մէջ միավորում է նախկինում ստեղծված չորս առանձին համայնական թերթերը։ Այն իր բնույթով 1. **հոգեւոր է**, քանի որ ներկայացնում է հոգեւոր նյութեր՝ քարոզներ, քրիստոնեական ուսմունքի տարբեր հարցերի բացատրություններ, աղոթքներ, սրբերի վարք, 2. **մշակութային է**, քանի որ ներկայացնում է նաեւ գրական ստեղծագործություններ, 3. **հասարակական է**, քանի որ կլինեն նաեւ հասարակական տարբեր հարցերի, հատկապես, համայնքների զարգացման, Եկեղեցու սոցիալական ուսմունքի վերաբերյալ հոդվածներ, կարծիքներ, 4. **երիտասարդական է**, քանի որ թերթում հրապարակված են ձեր համայնքների երիտասարդների նյութերը, նաեւ ներկայացված է նրանց հոգեւոր եւ հասարակական գործունեությունը։*

Այս թերթի առաջնային հասցեատերերը երիտասարդներն են, ապա նաեւ՝ ավագ սերունդը՝ երիտասարդների միջոցով, որովհետեւ նրա՛նցն է ձեր համայնքների հոգեւոր, բարոյական եւ սոցիալական ապագան, հետեւաբար, այս թերթը մի ներդրում է նրանց զարգացման մէջ եւ նրանց միջոցով՝ համայնքային զարգացման գործընթացում։

Ուզում եմ երկու խոսքով ներկայանել հայ կաթողիկէ երիտասարդական միության առաքելությունը եւ գործողությունների հիմնական ուղղությունները՝ իմ պատկերացմամբ, որոնք ներկայացրեցի նաեւ այս տարի Աղջանյան կենտրոնում կազմակերպված Երիտասարդական համայնքային օրերի ժամանակ, որ տեղի ունեցան սեպտեմբերի 3-5-ը եւ 7-9-ը։

Հայ կաթողիկէ երիտասարդական միությունների ընդհանուր առաքելությունը

*Այսօր հայ կաթողիկէ որոշ ժողովրդապետություններում գոյություն ունեն երիտասարդական խմբեր, որոշ տեղերում գործում են նաեւ քիչ թե շատ կայացած եւ կանոնավոր գործող երիտասարդական միություններ, որոնք բոլորն էլ մաս են կազմում Հայ Կաթողիկէ Ընդհանուր Երիտասարդական Միության եւ կիսում են նրա առաքելությունը, որն է, նախեւառաջ, **միասին կատարել Աստծո կամքը եւ նպաստել Եկեղեցու առաքելությանը՝ այսինքն ծառայել մարդու ամբողջական փրկությանը՝ հոգով եւ մարմնով**։*

*Տեր Հիսուս Քրիստոս Իր Եկեղեցու առջեւ դրել է մարդուն ամբողջապես ծառայելու խնդիրը, որ Հռոմի քահանայապետերը անվանում են «**մարդու համապարփակ զարգացում**» տերմինով։ Ըստ իր առաջնային նշանակության, որ մեկնաբանել է Պողոս 6-րդ Պապը՝ 1967-ի իր պատմական «Ժողովուրդների առաջընթացը»՝* Populorum Progressio, *կոչվող փաստաթղթում, «մարդու համապարփակ զարգացում»-ը նշանակում է բոլոր **մարդկանց եւ յուրաքանչյուր մարդու ամբողջական՝ համապարփակ, զարգացումը**։ Սա նշանակում է ծառայել մարդուն՝ նրա բոլոր դրսեւորումների մէջ՝ անհատական կյանքում՝ հոգեւոր, բարոյական, հոգեբանական, ֆիզիկական զարգացման եւ կենսապահովության ոլորտներում, նաեւ՝ մարդու հասարակական հարաբերությունների, պետության եւ կազմակերպական այլ ձեւերի զարգացման մէջ, բնապահպանության կամ արարչագործության հանդեպ խնամատարության գիտակցության զարգացման մէջ։ «Համապարփակ զարգացում» տերմինն, այսպիսով, իր մէջ ընդգրկում է մարդկային գործունեության ամենալայն եւ գրեթե անսահմանափակ տիրույթները, որոնց բոլորի համար Եկեղեցին շատ հստակ ուղերձ ունի, որովհետեւ Քրիստոս Ի՛նքն է պատվիրել իր աշակերտներին հոգ տանել միմյանց մասին՝ համապարփակ ձեւով։*

Ինչու՞ խոսեցի մարդու համապարփակ զարգացման առաքելության մասին։

Երիտասարդական միությունները ամենահարմար կառույցներից են, որ կարող են արդյունավետ գործել հատկապես այդ առաքելության մեջ՝ նախեւառաջ իրենք դառնալով համապարփակ զարգացած երիտասարդության օրինակ եւ լինելով խթան՝ իրենց տարեկիցների ամողջական զարգացման համար։

Հիմա Հայ Կաթողիկէ Երիտասարդաց ընդհանուր միության կազմակերպիչները աշխատում են միության առաքելության, տեսլականի, նպատակների, գործունեության սկզբունքների եւ ուղղությունների մշակման ուղղությամբ։

Հայ Կաթողիկէ Երիտասարդաց միությունների ընդհանուր առաքելությունը, իմ համոզմամբ, պետք է արտահայտվի հետեւյալ երկու հիմնական կետերում.

1.ապրել Տեր Հիսուսի Քրիստոսի Ավետարանի եւ Սուրբ Եկեղեցու ուսուցումների համաձայն, քարոզել Ավետարանը կյանքով, խոսքով եւ գործունեությամբ, միասին ընթանալ դեպի սրբություն,

2.զարգանալ համակողմանիորեն՝ հոգեւորապես, հասարակական հաղորդակցության ժամանակակից հմտություններով եւ միասին ստեղծել ինքնազարգացման նպաստավոր պայմաններ՝ ավելի աստվածահաճո եւ զարգացած անհատական եւ հասարակական կյանք ունենալու նպատակով:

Երիտասարդական միությունների գործունեության հիմնական ուղղությունները

Մարդու համապարփակ զարգացման մասին հիմնարար տեսլականի տիրույթում երիտասարդական միությունների գործունեությունը ես պատկերացնում եմ հետեւյալ երկու ուղղություններով.

1. **ինքնազարգացում**
2. **տարեկիցների եւ համայնքների զարգացում։**

Ըստ այդմ, այդ երկու ուղղություններով կարելի է առաջ ընթանալ, օրինակ, հետեւյալ գործողություններով.

1. ***ինքնազարգացման գործողություններ***

Ա. Աստվածաշնչի եւ այլ օգտակար գրականության հատվածների ընթերցում եւ քննարկում, հոգեւոր փորձառության կիսում,

Բ. Կազմակերպել զրույցներ, սեմինարներ՝ հոգեւոր եւ սոցիալական թեմաներով՝ հատկապես ուսումնասիրելով Աստվածաշունչը, Կաթողիկե Եկեղեցու սոցիալական ուսմունքը, նաեւ հասարակագիտության ձեռքբերումները, որոնք կարող են զարգացնել հաղորդակցական, աշխատանքային, լեզվական հմտությունները, հրավիրել մասնագետներ եւ մեկնել մասնակցելու այլ վայրերում կազմակերպվող սեմինարների։

2. ***տարեկիցների եւ համայնքների զարգացման գործողություններ***

Ա. Մշակել եւ իրականացնել պատանիների եւ երիտասարդների կրթական, զարգացողական ծրագրեր՝ խմբակների, դասընթացների, զրույցների, վարժանքների, սեմինարների, ճանաչողական այցերի միջոցով՝ նրանց փոխանցելով հնարավորինս հոգեւոր եւ սոցիալական ինքնազարգացման համար անհրաժեշտ միջոցների հնարավորինս լայն ընտրություն, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն ջանքերով հասնել բարձունքների։

Բ. Մշակել եւ իրականացնել բարեգործական ձեռնարկներ՝ աղքատներին, ծերերին, հիվանդներին հոգեւոր, հոգեբանական, սոցիալական եւ նյութական աջակցություն տրամադրելու նպատակով։

Գ. Մշակել եւ իրականացնել համայնքի տնտեսական, սոցիալական եւ բնապահպանական զարգացման ծրագրեր՝ փնտրելով եւ գտնելով շահագրգիռ հովանավոր կառույցների եւ անձանց, զբաղվել ֆոնդհայթայթմամբ։

Դ. Տեղական համայնքները դարձնել երիտասարդների համար գրավիչ՝ ապրելու եւ աշխատելու համար՝ ցույց տալով սեփական ծրագրերի արդյունավետությունը եւ նոր ստեղծարար գաղափարներ իրականացնելու հնարավորությունը։

Շատ կարեւոր է, որ երիտասարդական միություններն աշխատեն կանոնավոր օրակարգով, մշտապես կազմեն գործունեության երկարաժամկետ (մեկ տարվա) եւ կարճաժամկետ (մեկ ամսվա) նկարագիր, հանդիպումների օրակարգ եւ խստորեն հետեւել օրակարգին՝ միշտ բաց լինելով նոր անդամների, առաջարկությունների, նոր ծրագրային հավելումների առջեւ։

Գործունեության հիմնարար սկզբունքները

Եկեղեցական երիտասարդական միության գործունեության սկզբունքները, իմ համոզմամբ պետք է հիմնված լինեն Եկեղեցու սոցիալական ուսմունքի մշակած սկզբունքների վրա, որոնք պետք է լինեն հիմքը՝ Եկեղեցու առաքելության մեջ գործող յուրաքանչյուր հասարակական կառույցի գործունեության համար։

Այդ հիմնարար սկզբունքները հետեւյալն են.

1.մարդու արժանապատվության հարգում,

2.համընդհանուր բարիքի ստեղծում,
3.բոլորի մասնակցության ապահովում,
4.զորացնել դիմացինի կարողությունները,
5.ձգտել եւ հաստատել համերաշխություն:

Այս հինգ սկզբունքների մասին անհրաժեշտ է առավել մանրամասն խոսել թե երիտասարդական ընդհանուր հանդիպումների եւ թե միությունների տեղական կանոնավոր հանդիպումների ժամանակ եւ դրանց, նաեւ քրիստոնեական արժեքների հիման վրա մշակել աշխատանքային կանոնադրությունը եւ սկզբունքները։

Սոցիալական ուսմունքի այդ սկզբունքների վրա պետք է հիմնվի նաեւ համագործակցությունը ծխական երիտասարդական միությունների միջեւ։

Համագործակցությունը երիտասարդական միությունների միջեւ

Եկեղեցու ընդհանրականությունը ապրելու եւ համապարփակ զարգացման սկզբունքը գործադրելու համար անհրաժեշտ է ոչ միայն համայնքների ներսում երիտասարդական միությունների գործունեությունը, այլեւ՝ դրանց համագործակցությունը միմյանց միջեւ, նաեւ՝ ազգային եւ միջազգային մակարդակով՝ կաթողիկէ երիտասարդական կառույցների հետ։ Այսպիսի լայն համագործակցությունը բխում է Եկեղեցու ընդհանրականության եւ միության ավետարանական սկզբունքներից, որին պետք է անխախտ ձեւով հետեւեն եւ՛ հոգեւորականները եւ՛ աշխարհականները։ Իհարկե, արդյունավետ համագործակցության համար նախ հարկ է, որ կայացած լինեն հայ կաթողիկէ երիտասարդական միությունները՝ որպես կազմակերպված կառույցներ, որ գործում են բոլորի համար միեւնույն եւ հավասար, հստակ կանոններով եւ միեւնույն առաքելության գիտակցությամբ։ Անհրաժեշտ է, որ երիտասարդները նաեւ սովորեն արդյունավետ կերպով համագործակցել միմյանց հետ իրենց համայնքներում եւ իրենց հոգեւոր հովիվների հետ եւ ապա՝ այլ գյուղերի եւ քաղաքների երիտասարդական կառույցների հետ։

Երիտասարդական եկեղեցական միությունների միջեւ համագործակցությունը անհրաժեշտ է երիտասարդական ընդհանուր միության առաքելության առավել արդյունավետ կատարման համար։ Մեկուսացումը, կղզիացումը որեւէ երիտասարդական կառույցի համար՝ նշանակում է ոչ միայն խախտել Ավետարանական ընդհանրականության եւ սիրո պատվիրանները, այլեւ՝ սահմանափակել սեփական զարգացման հնարավորությունները։ Համագործակցությունը ստեղծում է փոխադարձաբար հարստանալու լայն հնարավորություններ։ Որպեսզի համագործակցությունը լինի արդյունավետ, դրանում պետք է շահագրգռված լինեն եւ՛ հոգեւոր հովիվները եւ՛ երիտասարդները՝ հիմնվելով մշակված սկզբունքների եւ նպատակների, այլ՝ ոչ թե անձնական նախասիրությունների, տարաձայնությունների վրա։ Համագործակցությունը պետք է լինի պարտադիր պայման՝ գործունեության հինգ հիմնարար սկզբունքները կյանքի կոչելու համար։

Անհրաժեշտ է միշտ մտածել համատեղ գործողությունների ծրագրեր, համատեղ աշխատելու առիթներ եւ գտնել միջոցներ՝ դրանք իրականացնելու համար. Ֆինանսական միջոցների սղությունը կարելի է ժամանակավորապես լրացնել այլընտրանքային ծրագրերով։ Օրինակ՝ եթե հնարավոր չէ կազմակերպել ընդհանուր սեմինարներ՝ դեմ առ դեմ հանդիպմամբ, կարելի է կազմակերպել համացանցային հարթակներում։ Կարելի է՝

–անցկացնել ստեղծագործական մրցույթներ,
–ստեղծել ծրագրային գաղափարների եւ առաջարկների ընդհանուր քննարկման իրական կամ համացանցային հարթակներ,
–ստեղծել ընդհանուր աղոթքների, հոգեւոր կրթության հնարավորություններ, խմբեր,
–մշակել եւ միասին իրականացնել սոցիալական, բնապահպանական փոքրիկ կամ լայնամասշտաբ ծրագրեր՝ մի քանի գյուղերում կամ քաղաքներում՝ աղքատների տների նորոգության, սննդօգնության կամ գումարի հանգանակության, տարածքների մաքրման եւ կանաչապատման, ծառատունկերի, շփման ներառական տարածքներ, վայրեր, առիթներ կազմակերպելու, սպորտային եւ մշակութային միջոցառումներ կազմակերպելու, միասնական հոգեւոր եւ ճանաչողական ուխտագնացություններ կատարելու, մարդու իրավունքների՝ դեռ չծնված երեխաների կյանքի իրավունքի, կրթության, բնական միջավայրի պաշտպանության եւ այլ իրավունքների պաշտպանության արշավներ, հասարակական ակցիներ իրականացնելու, գաղափարային շարժումներ ծավալելու եւ այլաբնույթ այլ ծրագրեր, որոնք, ըստ էության, կարող են լինել անթիվ։ Ի դեպ, միասնական այսպիսի ծրագրերի համար ֆինանսական միջոցներ հայթայթելը, կարծում եմ, ավելի դյուրին է, երբ հանդես գաք՝ որպես երիտասարդական նախաձեռնություն։ Իսկ եկեղեցական միություն լինելու, հոգեւոր հիմք ունենալու փաստը պետք է դիտել ոչ թե որպես սահմանափակման պատճառ, օրինակ՝ ֆոնդհայթայթման համար, այլ՝ ճիշտ հակառակը, մի իրական կատալիզատոր կամ կողմնացույց՝ հասարակության մեջ անկեղծ գաղափարակիցներ գտնելու եւ Ավետարանի ու մարդկային լավագույն արժեքները տարածելու հնարավորություն՝ միշտ սնվելով Քրիստոսի հետ մտերմության անսպառ եւ օրհնաբեր աղբյուրից։ Այս գիտակցությանը հասնելու համար հարկավոր է սեւեռվել ոչ թե ամեն գնով ինչ-որ ծրագիր իրականացնելու կամ դրամ հայթայթելու վրա, այլ՝ Աստծուն իրապես հաճելի գործեր կատարելու առաքելության վրա, թեկուզ չնչին գործեր՝ մարդկային կարծիքի տեսանկյունից։

Այդպիսի մտահղացումների որոշ գործող օրինակներ արդեն իսկ ունենք։ Այստեղ, ուրեմն, շատ կարեւոր է ոչ միայն հոգեւոր հովիվների, այլ՝ հատկապես, երիտասարդների՛դ նախաձեռնությունները, մտահղացումները

եւ ապա դրանց միասնական կամ թիմային գործադրումը։ Միասնական համագործակցված ծրագրերը ոչ միայն ավելի ազդեցիկ են եւ արտահայտում են ընդհանրականության եւ միության ավետարանական սկզբունքները, այլեւ ստեղծում են հեռանկարներ՝ ծխական միությունների հետագա զարգացման համար։

Հարկ է միշտ թարմ պահել կապերը նաեւ միջազգային մակարդակով՝ հատկապես, Երիտասարդական համաշխարհային օրերի ընթացքում ստեղծված կապերը՝ փնտրելով ոչ միայն պարզ ընկերության, այլեւ՝ համագործակցության ընդհանուր եզրեր, կատարել ծրագրեր, օրինակ՝ համացանցի եւ միմյանց համար աղոթելու միջոցով, ընդհանուր դիտավորություններով կամ Քահանայապետի դիտավորություններով միասին աղոթքի հնավարություններ, օրեր սահմանելով, առցանց քննարկումների, սեմինարների միջոցով եւ այլն։

Պետք է միշտ հիշել, որ ինչ գործ էլ անենք Եկեղեցում՝ ոչ թե մեր, այլ՝ Աստծո փառքի համար է, որպեսզի Աստծո սերը մեր գործերի միջոցով սփռվի աշխարհում, ըստ Պողոս առաքյալի խոսքերի.

«**Հույսը երբեք չի ամաչեցնում, որովհետեւ Աստծու սերը սփռված է մեր սրտերում՝ Սուրբ Հոգու միջոցով**», Հռմ. 5, 5։

Աշոցքի տարածքում կգործի «Հայկական Կարիտաս»-ի ծխական գրասենյակ

Սիրելի՛ երիտասարդներ եւ պատանիներ, համայնքներում ձեր հոգեւոր եւ հասարակական գործունեությունը հիմք է դառնալու Աշոցքի տարածաշրջանում Հայկական Կարիտասի՝ տարիներ շարունակ իրականացվող ծրագրերի ընդլայնման, նոր ծրագրերի իրագործման եւ ծխական կամ համայնքային գրասենյակ հիմնելու համար։ Սա նախատեսված է Հայկական Կարիտասի «Ծխական հասարակական խորհուրդներ» ծրագրով՝ որպես հնարավոր մեկ նպատակ։ Այս մասին երկար ժամանակ է՝ ինչ երազում էի։ Փառք Աստծո, որ այս գաղափարը մոտենում է մարմնավորման փուլին։ Եվ դա կախված է, հատկապես, ձե՛ր ջանքերից։ Կարիտասի գրասենյակը, կհիմնվի Մեծ Սեպասարի երիտասարդական կենտրոնում, որն այժմ նորոգվում է։ Ծխական Կարիտասի գործունեությունը սկսելու համար անհրաժեշտ է հնարավորինս մեծ թվով խելացի, հավատացյալ եւ գործունյա երիտասարդների ու պատանիների կամավորական աշխատանքը, նվիրումը՝ Եկեղեցու առաքելությանը եւ Քրիստոսի Անձին։ Հուսով եմ՝ մեր երիտասարդները, անկախ համավարակի ստեղծած դժվարություններից, մոտ օրերիս առավել ակտիվ կլինեն, եւ միասին կծրագրենք մեր առաջիկա անելիքները։

Տ. Հովսեփ Քհն. Գալստյան
Հոգեւոր հովիվ՝ Մեծ Սեպասար, Ղազանչի, Բավրա, Սիզավետ եւ Սարագյուղ համայնքների

Սուրբ Խաչի խորհուրդը



Խաչի խորհուրդը մարդկության կյանքում շատ դժվար է ընդունվում, քանի որ կապված է տառապանքի եւ մահվան հետ, որից վախենում ենք։ Խաչը պետք է դիտարկել միայն Հիսուս Քրիստոսի Հարության տեսանկյունից։

Խաչելությունը մահապատժի ամենամոթալի տեսակներից էր, որին արժանանում էին ամենավատ հանցագործները։ Տերն ինքնակամ Իր վրա վերցրեց ամոթանքն ու անպատվությունը՝ մարդկության գործած մեծաթիվ հանցագործությունների պատճառով՝ դառնալով քավության Զոհ՝ յուրաքանչյուր մարդու գործած մեղքերի համար, բոլոր ժամանակներում։ Այսպիսով, Խաչը դարձավ խորան, որի վրա Հիսուս Ինքն Իրեն զոհ մատուցեց՝ յուրաքանչյուր մեղավորի հանդեպ ունեցած սիրո համար, որպեսզի մեր մեղքերը մեզ ներվեն, իսկ հոգիները լվացվեն Իր արյամբ եւ փրկվեն հավիտենական դատապարտությունից։ Խաչը մահվան գործիք լինելուց դարձավ մարդու հանդեպ բարձրագույն սիրո խորան, զոհասեղան։

Միայն Աստվա՛ծ կարող է ամենամեծ չարիքից դուրս բերել բարձրագույն բարիք։ Սուրբ Հովհան Ոսկեբերանն իր «Զատկական ճառում» ասում է, որ սատանան, որն ուզում էր սպանել Փրկչին եւ ոչնչացնել Նրա մարդկության փրկության ծրագիրը, վերջնականապես պարտվեց Խաչի վրա եւ Քրիստոսին տալով մահվան թույնը՝ ինքը խմեց այն։ Քրիստոս հարյավ, եւ մահը հաղթահարված է, իսկ դժոխքն ավերվեց։

Այսպես, Խաչը դարձավ հավիտենական կյանքի ծառը, որի պտուղը Քրիստոսն էր՝ նրա աղբյուրը։ Մեզանից յուրաքանչյուրի կյանքում էլ խաչ կա եւ այն տարբեր է ամեն մեկի համար, սակայն յուրաքանչյուրի համար այն ծանր է։ Եթե մենք ընդունենք մեր խաչը, որը պետք է կրենք եւ որի վրա պետք է մեռնենք՝ նայելով Հիսուսին եւ այն տանելով Նրա հետ միասին, ապա այն մեզ համար կդառնա ոչ միայն տառապանքի առարկա, այլեւ՝ սիրո խորան, կենաց ծառ, զորության աստվածային մխիթարության աղբյուր։

«Խաչի մեջ զորություն կա, Խաչի մեջ քաղցրություն կա, Խաչի մեջ սիրո իմացություն կա։ Ով բացահայտի Խաչը, նա չի ընկնի սրտին հասած ցավի պատճառով». սրանք բառերն են մի լեհական երգի, որ գրվել է XIX դարում, մի հայ քահանայի կողմից։

Կա մի այնպիսի ցավ, որ սիրուց է ծնվում։ Դա տառապանքն է, բայց՝ քաղցր տառապանքը, որը նաեւ թեւեր է տալիս։ Խաչը «անեծքից» կարող է վերածվել «օրհնության», Տիրոջ հետ միասնության աղբյուրի, ճանապարհի

եւ Դրախտի բանալու։ Սակայն արդյո՞ք մենք կընդունենք այն որպես շնորհ եւ դեղ՝ Աստծո հանդեպ սիրով, թե անընդհատ կտրտնջանք եւ կփորձենք մերժել այն։ Խաչի իմացությունն ու սերը Սուրբ Հոգու հատուկ շնորհն է։ Միայն դա կարող է մեզ բացահայտել Խաչի գեղեցկությունը, զորությունը եւ քաղցրությունը։

Եկե՛ք աղոթենք Սուրբ Հոգուն, որ կարողանանք կրել մեր խաչը Հիսուսի հետ միասին՝ հավատքով եւ սիրով, որպեսզի այն չդառնա մեզ կործանող ժայռ, այլ՝ լինի զորացման ու վեհացման վեմ, լեռ, որտեղ մենք կհանդիպենք ու կբացահայտենք Սիրո Աստծուն։ Հիսուսի Խաչի ճանապարհին Նրա հետ էր Սուրբ Կույս Մարիամը, Ով մխիթարում էր Նրան Իր ներկայությամբ՝ կարեկցանքով, աղոթքով եւ սիրով։ Մեր խաչի ճանապարհին Նա եւս մեզ հետ է։ Թող Տիրամոր լուռ ներկայությունն ու աղոթքը մեզանից յուրաքանչյուրի համար դառնա սփոփանք եւ ոգեշնչում։

Հ. Պետրոս Ծ. Վրդ. Եսայան

«Ո՞վ է իմ ընկերը». Ղկ. 10, 29

«Մի մարդ Երուսաղեմից Երիքով էր իջնում եւ ընկավ ավազակների ձեռքը, որոնք նրան մերկացրին, վիրավորեցին եւ կիսամեռ թողեցին ու գնացին: Պատահեց, որ մի քահանա նույն ճանապարհով իջնում էր, նրան տեսավ եւ թողեց անցավ: Նույնպես եւ մի ղեւտացի, նույն տեղով անցնելիս, տեսավ եւ թողեց անցավ: Մի սամարացի, որ ճամփորդում էր, նույն տեղով եկավ նրա մոտ եւ տեսնելով նրան՝ գթաց: Եվ մոտենալով՝ կապեց նրա վերքերը, վրան ձեթ ու գինի լցրեց եւ նրան իր գրաստի վրա դնելով՝ տարավ մի իջեւան եւ խնամեց նրան: Եվ հաջորդ օրը, երբ դուրս էր գալիս այնտեղից, հանեց, իջեւանատիրոջը երկու դահեկան տվեց եւ ասաց. «Խնամի՛ր նրան եւ ինչ որ ծախսես նրա վրա, իմ մյուս անգամ գալուն կհատուցեմ քեզ»: Արդ, ըստ քեզ, այս երեքից ո՞րը մերձավորի պես վերաբերվեց նրան, ով ավազակների ձեռքն էր ընկել»: Եվ նա ասաց. «Նա, ով բարիք արեց նրան»: Հիսուսը նրան ասաց. «Գնա՛ եւ դու նույն ձեւով արա՛»,

Աւետարան ըստ Ղուկասի, 10, 30-37:

Բարի սամարացու օրինակով Հիսուսը մեզ բացատրում է, որ «ընկեր» հասկացությունը վերաբերում է բոլորին եւ, հատկապես, նրանց, ովքեր մեր օգնության կամ ուշադրության կարիքն ունեն։ Այս իմաստով, մարդուն վերաբերվել ընկերոջ նման՝ նշանակում է հոգ տանել մարդու մասին, սիրել, զոհողություններ կատարել, նվիրել անշահախնդիր ձեւով։ Բայց անհրաժեշտ է, որ շրջապատի մարդկանց մեջ ընկեր փնտրելիս՝ նախ մե՛նք լինենք ընկեր ուրիշների համար՝ հետեւելով Ավետարանի ոսկե օրենքին. «Այն ամէնը, ինչ կը կամենաք, որ մարդիկ ձեզ անեն, նոյնը եւ դուք արէ՛ք նրանց, որովհետեւ ա՛յդ իսկ են օրէնքն ու մարգարէները» Մտթ. 5, 12։

Մեզնից յուրաքանչյուրը նախ ի՛նքը պետք է հարգանքով, սիրով, ներողամիտ լինի դիմացինի նկատմամբ, որպեսզի ընդունվի որպես ընկեր կամ, ավելի ճիշտ կլինի ասել, որպես բարեկամ, այսինքն՝ բարին կամեցող։ Կարող ենք օգտագործել նաեւ «մերձավոր» բառը, որ նշանակում է՝ մերձ կամ մոտ լինել մարդուն։ Հնարավոր չէ դիմացինին բարին կամենալ կամ լինել մոտ, մերձավոր, եթե մարդու հետ չփվելիս միայն քո սեփական շահն ու օգուտն ես փնտրում, կամ ուզում ես շահագործել դիմացինին՝ ըստ քո քմահաճույքի, կամ չես հարգում նրա արժանապատվությունը, վերաբերվում ես ինչպես քեզնից ցածրի, չես ուզում հավասարը հավասարի նման հարաբերություն զարգացնել նրա հետ, կարծում ես, որ դու մարդկային որակներով ավելի լավն ես, քան դիմացինը, որ դու միշտ ճիշտ ես, իսկ դիմացինը՝ միշտ սխալ, չես կարող ընդունել, որ դիմացինն էլ կարող է ճիշտ լինել, իսկ դու՝ երբեմն նաեւ սխալ։

Հիսուս լեռան քարոզի մեջ մարդկային հարաբերությունների կառուցման շատ հստակ եւ արմատական պատվիրաններ է տալիս։ Ասում է. «Լսել էք, թէ ինչ ասուեց նախնիներին. «Մի՛ սպանիր», որովհետեւ ով որ սպանի, ենթակայ կլինի դատաստանի։ Իսկ ես ձեզ ասում եմ, թէ ամէն մարդ, որ բարկանում է իր եղբօր վրայ, ենթակա կը կլինի դատաստանի, եւ ով որ իր եղբօրն ասի՝ հիմար, ենթակա կը լինի ատեանի, եւ ով որ իր եղբօրն ասի՝ ապուշ, ենթակայ կը լինի գեհենի կրակին» Մտթ. 5, 21–22։

Հիսուս մեզ բացատրում է, որ մենք ոչ թե միայն սպանությունից պետք է հեռու մնանք, այլեւ՝ միմյանց վիրավորելուց, որը եւս կարող է սպանել մարդու հոգին, նվաստացնել արժանապատվությունը, հուսալքել, հասցնել բարոյական մահվան, կոտրել ինքնավստահությունը եւ պատճառել այլ զանազան ծանր հոգեբանական, բարոյական հետեւանքներ, որոնք կարող են հավասարազոր լինել սպանությանը։ Հիսուս շատ հստակ եւ կտրուկ բառերով մեզ արգելում է վիրավորել դիմացինին, հիմքից արգելում է ատելությունը, բարկությունը, որ կարող է զանազան մեղքեր ծնել։ Հիսուս Արգելում է նույնիսկ երբեմն այնքա՛ն անվնաս թվացող բառերը՝ «հիմար, ապուշ», որոնք, երեւի, շատ հաճախ ենք օգտագործում առօրյայում, բայց չենք նկատում, թե ինչ հետեւանքներ են ունենում մեր բարկությունից կամ արհամարհանքից ծնված այդ «սովորական» բառերը։ Այդ վիրավորական բառերն ասում ենք ընտանիքի անդամներին կամ ընկերներին, մարդկանց, ում հետ հաց եք կիսում, շփվում եք ամեն օր։ Վիրավորական այդ բառերը այնքան ծանր են, որ Հիսուս ասում է՝ եթե դրանք

ասեք, գեհենի կամ դժոխքի կրակին կարժանանաք։ Գեհենը միայն անդրաշխարհում չէ, այլ սկսվում է այն պահին, երբ փոխադարձ վիրավորական բառեր են հնչում, վեճ է սկսվում, հայհոյանքներ, բռնություն, ատելություն, ոխակալություն, չարախոսություն, բամբասանք, ստախոսություն. հենց այդ երեւույթների մեջ է իրական դժոխքը։ Դժոխքը Աստծուն մոռացած կյանքն է։ Դժոխքը տիրում է մեր սրտերում, երբ այնտեղից դուրս են գալիս այդ բառերը։ Հիսուս ասում է՝ մարդուն պղծում է ոչ թե այն ինչ ներս է մտնում բերանից, այլ՝ այն, ինչ դուրս է գալիս բերանից, որովհետեւ բերանից դուրս է գալիս սրտում կուտակված մաղձը, մեղքի ցանկությունը։

Հակոբոս առաքյալը մարդկային լեզվի մասին գրում է հետեւյալը.

«Եթէ մէկը խօսքով չի մեղանչում, նա կատարեալ մարդ է՝ ընդունակ սանձահարելու իր ամբողջ մարմինը: Տե՛ս, թէ ինչպէս սանձեր ենք դնում ձիերի բերանը, որ նրանք մեզ հնազանդուեն. եւ նրանց ամբողջ մարմինը կառավարում ենք: Ահա՛ւասիկ եւ նաւերը. ի՞նչ հսկայ բաներ են, սաստիկ հողմերից քշւում են, բայց փոքր մի ղեկով ուղղւում են ո՛ր կողմը որ նաւավարի սիրտն ուզում է: Այսպէս էլ լեզուն մի փոքր անդամ է, բայց մեծամեծ բաներ է բարբառում: Ահա թէ մի փոքր կրակ ինչպիսի՛ անտառներ է հրդեհում: Լեզուն էլ կրակ է, մի աշխարհ անիրաւութեան. մեր անդամների մէջ է հաստատուած լեզուն, որ ապականում է ամբողջ մարմինը եւ կրակով վառում մեր ամբողջ կեանքը, բորբոքուած գեհենի կրակով: Գազանների, թռչունների եւ սողունների ամէն տեսակ եւ ինչ որ կայ ծովի մէջ, հնազանդուած է եւ հնազանդւում է մարդկային բնութեանը, բայց մարդկանց լեզուն՝ այդ չարը, անզսպելին եւ մահաբեր թոյնով լցուածը, ոչ ոք չի կարող հնազանդեցնել: Նրանով օրհնում ենք Տիրոջը եւ Հօրը եւ նրանով անիծում ենք մարդկանց, որ ստեղծուեցին Աստծու նմանութեամբ: Նոյն բերանից դուրս են գալիս օրհնութիւններ եւ անէծքներ: Եղբայրնե՛ր իմ, պէտք չէ, որ այդ այդպէս լինի։ Միթէ մի աղբիւր նոյն ակից քաղցր եւ դառն ջուր կը բխեցնի՞», Յակ. 3, 2-10։

Աստված լեզուն տվել է մարդուն ոչ թե մեղք գործելու համար, ոչ թե բամբասելու, հայհոյելու կամ անիծելու համար, այլ՝ Աստծուն օրհնելու համար, մարդկանց եւ արարչագործությունը օրհնելու համար, ընկերոջը մխիթարելու, ոգեւորելու, հույս տալու, հավատք ներշնչելու համար, սիրո բառեր ասելու համար, խաղաղություն տարածելու համար.

«Երանի՛ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծո որդիներ պիտի կոչուեն», Մտթ. 5, 9։

Պողոս առաքյալը եփեսացիներին գրում է.

«Ոչ մի տգեղ խօսք ձեր բերանից թող չելնի, այլ միայն բարի խօսքը, որ շինիչ է եւ օգտակար, որպէսզի շնորհով լցուի նա, ով այն լսում է... Ամէն դառնութիւն, բարկութիւն, զայրոյթ, աղաղակ եւ հայհոյութիւն թող վերանայ ձեզնից՝ իրենց չարութեամբ հանդերձ։ Միմեանց հետ եղէ՛ք քաղցր, գթած՝ ներելով միմեանց, ինչպէս որ Աստուած ներեց մեզ Քրիստոսով...», Եփ. 4, 29-32։

Երբ տեղի ենք տալիս մեր բարկությանը, նախանձին, ատելությանը, ապա հաղթում է սատանան, իսկ Պողոսն ասում է. «Սատանային տեղի մի՛ տուէք...զօրացէ՛ք Տիրոջով եւ Աստծու սպառազինութիւնը հագէ՛ք, որպէսզի կարողանաք ընդդիմանալ սատանայի հնարանքներին», Եփ. 6, 10-11։

Աստծու սպառազինությունը աստվածային շնորհներն են՝ Աստծո գերբնական զորությունները, կարողությունները, որոնք մարդն ընդունում է Աստծուց՝ որպես ձրի պարգեւ, իր հավատքի չափին համապատասխան։ Հետեւաբար, որպեսզի կարողանանք հետու մնալ սատանայի հնարանքներից եւ զսպված լինել, տիրապետել մեր սեփական անձին, սանձել մեր լեզուն, կառավարել մեր զգացմունքները, տեղի չտալ բարկությանը, ատելությանը, մենք կարիքն ունենք Աստծո զորության, առանց որի մենք կպարտվենք սատանային։ Մարդն առանց Աստծո օգնության՝ չի կարող պայքարել ոչ սատանայի եւ ոչ էլ իր սեփական թուլությունների եւ մոլուցքների դեմ։

Հիսուս մեզ առաջարկում է հավատալ Իրեն, կատարել իր պատվիրանները եւ աղոթքով աղաչել Աստծուն, որ զորացնի մեզ, պաշտպանի չարի հարձակումներից։ Իսկ որպեսզի մեր աղոթքը ընդունելի լինի Աստծո առաջ, պետք է աղոթել խոնարհությամբ՝ հասկանալով մեր մեղքերը, թուլությունները, ոչնչությունը՝ Աստծո առաջ, պետք է ոչ թե արդարանալ Աստծո առաջ, ոչ թե մտածել, թե՝ ես արդար եմ, դիմացինս՝ մեղավոր, այլ գիտակցել, որ ամենամեղավորը ե՛ս եմ, եւ նախ ե՛ս կարիք ունեմ Աստծո օգնության, որ կարողանամ տիրապետել ինքս ինձ եւ օգնեմ դիմացինին՝ հասկանալ, որ ինքն էլ սխալվում է, կարողանամ խաղաղություն հաստատել, հաշտություն կառուցել, ներել։ Խոնարհությունը սկսվում է այն վայրկյանին, երբ մտածում եմ, որ իմ պահվածքի՛ց է կախված խաղաղությունը իմ միջավայրում, որ իմ յուրաքանչյուր բառը, շարժումը վճռական նշանակություն ունի, շատ ծանրակշիռ է՝ նախեւառաջ Աստծո համար։

Մարդու յուրաքանչյուր բառն այնքան մեծ կարեւորություն ունի Աստծո առաջ, որ նախքան իր փրկագործության ծրագիրը սկսելը, Աստված իր հրեշտակին ուղարկեց Կույս Մարիամի մոտ, որ նրանից համաձայնության խոսքը առնի։ Միայն Մարիամի համաձայնությա՛մբ հնարավոր եղավ փրկագործությունը։ Երբ Մարիամը հրեշտակին ասաց. «Թող լինի ինձ քո խօսքի համաձայն», հենց այդ վայրկյանին Աստծո Խոսքը բնակվեց եւ մարդկային մարմին առավ Մարիամի արգանդում, Աստված մարդացավ, որպեսզի փրկվի ամբողջ մարդկությունը։ Հիշելով ավետման այս խորհրդավոր եւ պատմական դրվագը՝ ջանանք առավելագույն լրջությամբ վերաբերվել այն ամենին, ինչ կա մեր սրտի մեջ եւ թե ինչ բառերն են դուրս հորդում մեր շուրթերից։ Ամեն մի բառն արտասանելուց առաջ եկե՛ք մի լավ մտածենք՝ հանդարտությամբ, աղոթքով, հավատով եւ ներքին խաղաղ ուրախությամբ, որ Աստծուց է գալիս եւ կարող է ուղղորդել մեր ամբողջ կյանքը։ Եկե՛ք գիտակցենք, որ դիմացինին ասված մեր յուրաքանչյուր բառից է կախված եւ՛ մեր հոգու ընթացքը դեպի Երկինք կամ դժոխք, եւ՛ շրջապատի մարդկանց հոգեվիճակը եւ կյանքի որակը։ Հիշեցե՛ք, որ

ձեր կյանքի յուրաքանչյուր պահը թանկ է եւ անվերադարձ. «Օգտագործեցե՛ք ժամանակը, քանզի օրերը չար են», ինչպես զգուշացնում է Սուրբ Պողոսը։

Տ. Հովսեփ Գալստյան

Սուրբ Դոմինիկ Սավիոյի կյանքը

Հեղինակ՝ Հայր Հովհաննես Բոսկո
Թարգմ.՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան

Նախաբան

1880

Իմ սիրելի՛ տղաներ,

Դուք ինքներդ եք ինձ հաճախ խնդրել ձեզ համար մի բան գրել Դոմինիկ Սավիոյի մասին, եւ, ամեն ինչ անելով, որպեսզի գոհացնեմ ձեր անկեղծ փափագը, ահա՛ նրա կյանքը՝ գրված համառոտ եւ պարզորեն...

Երբ կարդաք Դոմինիկի կյանքը, ինքներդ ձեզ ասացե՛ք այն, ինչ Սբ. Օգոստինոսն էր ասում նման դեպքերում. «Ինչու՞ ոչ ես էլ»։ Այսինքն, եթե իմ տարիքի մի տղա, ամեն ինչով ինձ նման, ով ունեցավ նույն դժվարությունները, ինչ ես, կամ ավելի վատը, եւ կարողացավ հետեւել Քրիստոսին այդպիսի քաջությամբ եւ ի սրտե նվիրումով, ինչու՞ ես էլ նույնը չպետք է անեմ։ Հիշեցե՛ք, որ ճշմարիտ կրոնը չի նշանակում պարզապես ինչ-որ բաներ ասել, այլ նշանակում է՝ անել։ Եթե կարդում եք մի բան, որով հիանում եք, մի՛ բավարարվեք ասելով. «Ի՜նչ հոյակապ է», այլ փոխարենը, ասացեք. «Ե՛ս էլ եմ նույնը անելու»։

Թո՛ղ Աստված ձեզ եւ բոլոր այս գրքույկը ընթերցողներին պարգեւի շնորհ, որ այն օգտակար լինի ձեզ։ Թող, որ Սրբուհի Մարիամը, ում Դոմինիկը շա՛տ էր սիրում, շնորհի, որ մենք բոլորս սիրենք Աստծուն մեր ամբողջ սրտով եւ հոգով, որովհետեւ միայն Աստվա՛ծ է արժանի մեր ամբողջ սիրուն եւ ծառայությանը։

Հայր Հովհաննես Բոսկո

ԳԼՈՒԽ Ա

Տունը, տղայի բնավորությունը եւ բարությունը

Դոմինիկի ծնողները՝ Շառլ եւ Բրիջիդ Սավիոները, աղքատ, աշխատասեր մարդիկ էին, Քաստելնուովո դը Աստի փոքրիկ քաղաքից, որ Թուրինից հեռու էր 10 մղոն։ 1841թ. նրանք տեղափոխվեցին ապրելու Ռիվայում։

Երբ Դոմինիկը երկու տարեկան էր, նրա ծնողները որոշեցին վերադառնալ իրենց ծննդավայրը եւ մի տուն գտան Մուրիալդոյում՝ Քաստելնուովո դը Աստիի շրջակայքում։

Նրա ծնողները շատ էին սիրում իրենց որդուն եւ մտածում էին միայն մեկ բանի մասին՝ նրան դաստիարակել որպես լավ քրիստոնյա։ Դոմինիկը բարի ու ազնիվ էր, ուներ մի սիրտ, որը մի բեղուն դաշտ էր Աստծո գործերի համար։ Երբ դեռ չորս տարեկան էր, արդեն լավ սովորել էր իր առավոտյան աղոթքները եւ ինքնուրույն անգիր ասում էր։ Նա միշտ իր մայրիկի կողքին էր, պատրաստ ամեն կերպ օգնելու նրան։ Եթե երբեմն հեռու էր գնում, ապա՝ միայն մի անկյունում աղոթելու համար։

Դոմինիկի ծնողներն ասում էին. «Վաղ տարիքից, երբ երեխաների համար շատ դժվար է հանգիստ լինել, եւ միշտ ուզում են քաշել ամեն բան, ձեռք տալ, Դոմինիկը ոչ միայն լսում էր եւ պատրաստ էր անել ամեն բան, որ մենք խնդրում էինք, այլեւ միշտ ջանում էր անել մի բան, որ մեզ կերջանկացներ»։

Երբ երեկոյան նրա հայրիկը տուն էր գալիս աշխատանքից, Դոմինիկը վազում էր դիմավորելու, բռնում էր նրա ձեռքը, կամ թռչում էր նրա գիրկը։ Սա շատ հետաքրքիր ու հաճելի էր ծնողների համար։

-Հայրի՛կ, շատ հոգնած կլինես, չէ՞։ Դու անքա՛ն ես աշխատում ինձ համար, իսկ ես միշտ չէ, որ ինձ լավ եմ պահում։ Ես աղոթում եմ, որ Աստված քեզ առողջություն տա եւ ինձ լավը դարձնի։

Եվ այս ասելով՝ Դոմինիկն իր հոր մոտ էր տանում աթոռը, որ հայրիկը նստի, ընկերանում էր նրան եւ հազար ու մի այլ փոքրիկ բաներ էր անում իր հայրիկի համար։ «Դա ինձ համար շատ հանգստացնող էր աշխատանքիս մեջ,-ասում էր հայրիկը,-եւ ես անհամբերությամբ սպասում էի, թե երբ եմ տուն վերադառնալու եւ համբուրելու իմ Դոմինիկին, ով սիրտս շահել էր ամբողջությամբ»։

Դոմինիկը սիրում էր ոչ միայն ծնողներին. Աստծո հանդեպ իր սերը ավելի հասուն էր իր տարիքից։ Նա միշտ ուզում էր աղոթել, եւ երբեք հարկ չկար նրան հիշեցնելու։ Աղոթում էր ուտելուց առաջ եւ հետո, երեկոյան։ Նա ինքն էր հիշեցնում ուրիշներին աղոթելու մասին, երբ մոռանում էին։

Մի օր, մի անսովոր բանով տարված՝ նրա ծնողները նստեցին ճաշելու՝ առանց աղոթքի։ Դոմինիկն անմիջապես ասաց. «Հայրի՛կ, մենք դեռ չենք աղոթել», եւ խաչակնքվեց ու աղոթեց ինքնուրույն։

Մեկ այլ օր էլ նրանց տանը հյուր կար, որ մնաց նաեւ ընթրիքին։ Երբ ընթրիքը սեղանին դրվեց, հյուրը նստեց սեղանի մոտ եւ սկսեց ուտել՝ առանց խաչակնքվելու եւ աղոթելու։ Դոմինիկը չուզեց ուղղել հյուրին,

այլ գնաց սեղանից եւ հեռու մնաց մինչեւ հյուրը գնաց։ Երբ ծնողները հարցրին, թե ինչու այդպես անսովոր պահեց իրեն, ասաց.
–Ես չեմ ուզում սեղան նստել մի մարդու հետ, որ ուտում է կենդանիների նման։

ԳԼՈՒԽ Բ
Դոմինիկը Մուրիալդոյում, առաքինության նշանները, դպրոց հաճախելը

Այս գլխում փաստեր են, որոնք, գուցե, ոմանց համար անհավատալի լինեն։ Ես ներկայացնում եմ Դոմինիկի ծխական քահանայի պատմածը.
«Երբ ես եկա Մուրիալդո, ես հաճախ էի տեսնում հինգ տարեկան մի փոքրիկ տղայի, ով եկեղեցի էր հաճախում իր մայրիկի հետ։ Ինձ շատ տպավորեց տղայի դեմքի խաղաղությունը եւ անխափան բարեպաշտությունը եւ չէի զարմանում, որ ուրիշներն էլ էին նկատում դա։ Եթե նա առավոտյան գալիս էր եկեղեցի, եւ եկեղեցու դուռը փակ էր, նա ծունկի էր գալիս ու աղոթում, այլ ոչ թե սկսում էր խաղ եւ ուրիշ բաներ անել, ինչպես իր տարեկից մյուս տղաները։ Եվ կարեւոր չէր, թե գետինը ցեխոտ էր կամ՝ ձյան հաստ շերտով, նա ծունկի էր գալիս միշտ։ Հետաքրքրվեցի, թե ով էր այդ տղան, եւ պարզեցի, որ դարբին Շառլ Սավիոյի որդին էր։
Երբ հանդիպում էի նրան ճանապարհին, դեռ բավական հեռավորության վրա, նրա դեմքը փայլում էր ժպիտով։ Դպրոցում նա արագ առաջընթաց ունեցավ ոչ միայն այն պատճառով, որ խելացի էր, այլեւ որովհետեւ շատ աշխատասեր էր։ Մի քանի տղաներ, որոնց հետ նա շփվում էր, աղմկոտ էին եւ բնավ լավ վարք չունեին, բայց ես երբեք չտեսա, որ նա կռվեր մեկի հետ։ Երբ ուզում էին նրան կռվի մեջ ներքաշել, նա համբերում էր եւ առաջին հնարավորության դեպքում հանդարտ հեռանում։ Երբ ուզում էին, որ նա միանար իրենց՝ պարտեզներից ինչ-որ բան գողանալու, վնասելու ուրիշի իրերը, ծաղրելու տարեցներին կամ նման բաներ, նա ոչ միայն հրաժարվում էր, այլեւ համոզիչ կերպով բացատրում էր, որ նման բան անելը ճիշտ չէ։
Բարեպաշտության այդ ոգին հարատեւեց նաեւ հետագա տարիներին։ Չորս տարեկան էր միայն, երբ սովորեց սպասավորել Սուրբ Պատարագի ժամանակ, ինչն անում էր մեծ ուշադրությամբ։ Նա ջանում էր ամեն օր մասնակցել Սուրբ Պատարագին։ Եվ եթե ուրիշն էր իր փոխարեն սպասավորում, ինքը Պատարագին հետեւում էր նստարանից։ Քանի որ դեռ շատ փոքր էր, չէր կարողանում հասնել Ճաշոցի գրքին, երբ այն դրված էր լինում Սուրբ Խորանի Սեղանին։ Դժվար էր չժպտալ, երբ նա անհանգիստ մոտենում էր Խորանի Սեղանին, կանգնում ոտնաթաթերի ծայրին եւ ձգվում ինչքան կարող էր, որ հասնի Ճաշոցին։ Իսկ քահանան, որպեսզի ուրախացնի տղային, Ճաշոցը մոտեցնում էր Սեղանի ծայրին, որ տղան վերցնի այն եւ հաղթականորեն տանի դեպի մյուս ծայրը։
Նա կանոնավոր կերպով գնում էր խոստովանության, եւ, քանի որ արդեն գիտեր՝ ինչպես զանազանել երկնային Հացը երկրայինից, նրան թույլատրվեց ընդունել առաջին Սուրբ Հաղորդությունը։ Նա հաղորդվում էր մեծագույն ջերմեռանդությամբ։ Տեսնելով, թե ինչպե՛ս է աստվածային շնորհն աշխատում նրա հոգում այդքան հրաշալիորեն՝ հաճախ ինքս ինձ ասում էի. «Ինչպիսի՛ խոստումնալից ապագա ունի։ Թո՛ղ, որ Աստված նրա առջեւ ճանապարհ բացի դեպի այն բարձունքները, որոնց նա կարող է հասնել»»։
Ահա՛, թե ինչ էր գրում Մուրիալդոյի քահանան։

Շարունակությունը՝ թերթի հաջորդ համարներում:

Կույս Մարիամը՝ երիտասարդ աղջկա օրինակելի կերպար

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Եվան, հավատալով օձի խաբեությանը, կերավ արգելված պտուղը եւ տվեց Ադամին։ Եւ Աստված, իմանալով, որ կերել են այն պտուղը, որը արգելված էր, օձին ասաց՝ «Քանի որ այդ բանն արեցիր, անիծյա՛լ լինես երկրի բոլոր անասունների ու գազանների մեջ։ Քո լանջի ու որովայնի վրա սողաս, ողջ կյանքումդ հող ուտես։ Թշնամություն պիտի դնեմ քո եւ այդ կնոջ միջեւ, քո սերնդի ու նրա սերնդի միջեւ։ Նա պիտի ջախջախի քո գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը»։ Իսկ կնոջն ասաց «Պիտի անչափ բազմացնեմ քո ցավերն ու հառաչանքները։ Ցավերով երեխաներ պիտի ծնես, քո ամուսնուն պիտի ենթարկվես, եւ նա պիտի իշխի քեզ վրա»։ Եւ ամեն բան կատարվեց Աստծո հրամանով։ Եվ այսպես, մենք բոլորս էլ ծնվելիս՝ ադամական կամ սկզբնական մեղքով ենք ծնվում։ Բայց Աստված այլ պլաններ ուներ եւ տեսնելով թե ինչպես են մարդիկ մեղքի մեջ տառապում եւ հեռացել են Իրենից, որոշեց Իր Որդուն ուղարկել, որպեսզի ով որ հավատա չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա։ Մարիամը, որ ծնվեց առանց սկզբնական մեղքի, տվեց իր համաձայնությունը ավետաբեր Գաբրիել հրեշտակին եւ Սուրբ Հոգին իջավ նրա վրա, եւ Բարձրյալի Զորությունը հովանի եղավ

նրան, որովհետեւ նա ով պետք է ծնվեր Մարամից, Սուրբ է եւ Աստծո Որդի պետք է կոչվեր: Եւ Մարիամը մնաց հնազանդ եւ շարժվեց Աստծո կամքով:

Եթե հիմա մենք մարդկանց հարցնենք, թե ով է, ըստ Ձեզ, երիտասարդ աղջկա օրինակելի կերպար, բոլորը իրենց հարազատ աղջիկների անունը կտան ու իրենց քույրերին օրինակ կբերեն: Եվ ոչ ոք չի ասի, որ դա Սուրբ Կույսն է: Բայց Սուրբ կույսը իդեալական օրինակ է: Նախ, առաջինը Մարիամը ծնվեց՝ առանց սկզբնական մեղքի: Սուրբ Կույսը հնազանդ էր մնում: Եւ իր անսահման բարությամբ ու հեզությամբ խոնարհ մնաց մինչեւ վերջ: Սուրբ Կույսը մաքուր եւ անբիծ էր, նա երբեք մեղք չի գործել եւ չի ընկել գայթակղության մեջ: Սուրբ Կույսը մեր բոլորիս մայրն է եւ մենք պետք է միշտ վստահենք նրան եւ խնդրենք նրա բարեխոսությունը. նա մեզ անպատասխան չի թողնի երբեք:

Տիրուհի Մուրադյան
Բավրա

Տիրամոր քնքշանքը մի բանաստեղծություն է

«Ուրախացի՛ր, ով շնորհընկալ, Տէրը քեզ հետ է։ Մի՛ վախեցիր, որովհետեւ Աստծուց դու շնորհ գտար...» (Ղկ. 1, 28–34). այս բառերով Գաբրիել հրեշտակը ողջունեց Մարիամին՝ ավետելով Բարձրյալի որդու ծնունդը։ Սուրբ կույսն իր առաքինի վարքով ու ընթացքով արժանացավ Տիրոջ ամենամեծ պարգեւին՝ Աստծո որդու մայրը լինելու կոչմանը։ Ու այդ օրվանից Տիրամայրը եղավ բոլորի՛ս մայրը: Նա եղավ հիվանդների, դժվար կացության մեջ գտնվողների, աջակցության կարիք ունեցողների, անմեղների եւ մեղավորների մայրը: Նա իր քնքշությամբ պատրաստ եղավ պարուրել բոլորին՝ այն քնքշությամբ, որով շրջապատել էր իր որդուն՝ առանց որեւէ տարբերություն դնելու:

Տիրամոր քնքշանքը ամենաքաղցր պարգեւն է, որին կարող է արժանանալ յուրաքանչյուր քրիստոնյա: Տիրամայրը քրիստոնյայի կողքին է ամեն պահի, նա իր մայրական սրտով կիսում է ամեն քրիստոնյայի եւ՛ ուրախությունը, եւ՛ տխրությունը, միշտ փորձում է ճիշտ ուղու վրա դնել մեղավորին եւ լսում է բոլորիս աղոթքներն ու խնդրանքները:

Սուրբ Կույսը մի հայելի է, ուր հայ քրիստոնյա կանայք պետք է գտնեն իրենց իդեալական պատկերը։ Սուրբ կույսն իր քնքշությամբ, մաքրությամբ եւ բարությամբ պետք է առաքինի կնոջ օրինակ ծառայի բոլոր քրիստոնյա կանանց համար: Ամեն քրիստոնյա հայ կին պետք է լինի այնքան անեղծ, առաքինի եւ բարի, որքան Աստվածածինն է: Աստվածածինն այն բարձունքը պետք է լինի, որին ձգտում է քրիստոնյա կինը: Նա այն լույսն է, որը լուսավորում է բոլոր քրիստոնյաների ճանապարհը՝ Աստծո բարեպաշտությանը արժանանալու համար: Տիրամոր մայրական օրհնությա՛մբ միայն մենք՝ նրա զավակներս, կարող ենք հասնել երկնային օրհնության։

Տիրամայրը միշտ մեր կողքին է, նա միշտ մեզ շրջապատում է անկեղծ սիրով, ջերմությամբ, քնքշությամբ եւ մայրական խորհուրդներով: Եվ եթե մենք անկեղծությամբ եւ հավատով լցվենք, կզգանք նրա ներկայությունը մեր կյանքում:

Ամեն օր աղոթե՛ք եւ ձեր անկեղծ աղոթքով շնորհակալություն հայտնե՛ք տիրամորը՝ իր սիրո եւ քնքշության համար։ Աղոթե՛նք՝ Նարեկացու հետ.

Մեղեդի Ծննդյան

Սբ. Գրիգոր Նարեկացի

Ծավալվել են աչքերը ծով
Առավոտվա ծովի վրա ծիծաղախիտ,
Ինչպես երկու փայլակնաձեւ արեգակներ.
Շողն է նման լուսացնցուղ այգաբացի:
Թափվում էին այտերից վառ՝
Դափնեվարդի ու նռնենու ծաղկաթերթեր.
Գեղաշիտակ իրանից սիրտն էր կարկաչում
Հուզավարար կենսատու սեր:
Կամար կապած թեւերը գիրգ՝
Երգում էր նա ախորժալուր ու գեղգեղուն,
Ելեւէջներն հյուսում իրար.
Շարժվում հանդարտ ու ճեմում էր թիկնեթեկին:
Բերանն երկթերթ, շրթունքներից վարդն էր կաթում.

Լեզվի տավիղն էր քաղցրերգում հուզումնահորդ.
Շողում էին նույն կենսավառ
Սիրով չքնաղ ու գիներթույր
Ծամերն իրենց գիսակներով խոպոպավոր:
Այդ վարսերը համերամ զա՜րդ , համորեն զա՜րդ,
Ոլորք առած եռահյուսակ՝
Բոլորվել են այտերի շուրջ.
Լուսափայլ է ծովը, կարմիր վարդով լցված,
Դաստակներն են մանուշակի ծիրանի փունջ:
Բուրում էր նա կնդրուկի պես
Աստվածային հրով լցված մի բուրվառի.
Ձայնն էր մեղուշ, քաղցրանվագ:
Զարդարված էր պատմուճանով գեղեցկատես,
Որ բեհեզի կապույտ, որդան ու ծիրանի
Գույներով էր ոսկեշողում.
Գոտին կամար, արծաթափայլ,
Ոսկեփտուն ու նրբակերտ՝
Պաճուճված էր ակնեղենով շափյուղայի:
Երբ շարժվում էր մարգարտափայլ գեղցկությամբ,
Քայլերի հետ շողն էր կաթում իր ոտերից:
Քեզ պսակող թագավորին
Ու նորածին այն փրկչին փա՜ռք
Հավիտյանս հավիտենից. ամեն:

Անահիտ Գաբրիելյան
Բավրա

Ի՞նչ է կյանքը

Կյանքը նվեր է...

Զէ՞ որ մենք այն չենք վաստակում, այլ, պարզապես, ստանում ենք։ Կյանքը մեծագույն նվեր է՝ տրված մարդուն Աստծո կողմից։ Կյանքը մեզ տրված նվերներից միակն է, որը քիչ օգտագործելու դեպքում ավելի ուշ չի մաշվում...

Կյանքի մասին մարդկությունը ունի տարբեր պատկերացումներ։ Քրիստոնեության տեսանկյունից, մարդկությունը ստեղծվել է Աստծո պատկերով եւ կատարյալ է եղել, բայց մարդու մեղքը հանգեցրել է այն բանին, որ առաջին ծնողների սերունդը ժառանգել է սկզբնական մեղքը եւ դրա հետեւանքները։ Քրիստոսի չարչարանքները, մահը եւ հարությունը միջոցներ են տալիս՝ այս անմաքուր վիճակը հաղթահարելու համար։ Քրիստոսի միջոցով փրկություն ձեռք բերելու եւ Աստծո հետ հարաբերությունները պահպանելու հատուկ գործընթացը տարբեր է քրիստոնյաների դավանական ուղղությունների մեջ, սակայն դրանք բոլորը հիմնված են Քրիստոսի եւ Ավետարանի վրա՝ որպես հիմնարար ելակետ։ Ավետարանն ասում է, որ հավատքի շնորհիվ կործանվում է պատնեշը, որը մեղքը ստեղծել է մարդու եւ Աստծո միջեւ, դրանով իսկ թույլ տալով Աստծուն վերակենդանացնել հավատացյալներին եւ նրանց մեջ նոր սիրտ դնել։

Կաթոլիկէ մտածելակերպի լավագույն օրինակներից է Իգնատիոս դե Լոյոլայի սկզբունքը. «Մարդը ստեղծվել է փառաբանելու, պատվելու եւ ծառայելու Աստծուն՝ մեր Տիրոջը եւ դրանով իսկ փրկելու իր հոգին։ Ամեն ինչ երկրի վրա ստեղծվել է մարդկանց օգնելու համար, որպեսզի հասնեն այն նպատակին, որի համար նրանք ստեղծվել են։ Այսպիսով մարդը չպետք է ցանկանա առողջությունն՝ ավելի շատ, քան հիվանդությունը, հարստությունն՝ ավելի շատ, քան աղքատությունը, փառքն՝ ավելի շատ, քան ամոթը, երկար կյանքն՝ ավելի շատ, քան կարճը, քանի որ պետք է ցանկանալ եւ ընտրել միայն այն, ինչ օգնում է մեզ հասնել այն նպատակին, որի համար մենք ստեղծվել ենք»։

Միթե՞ կյանքը հրաշալի չէ։ Մենք լսում ենք թռչունների քաղցր դայլայլը։ Տեսնում ենք ծաղիկներ եւ էլի ուրիշ շատ բաներ, որ ստեղծել է Աստված։ Ճաշակում ենք Աստծո տված բարիքներից՝ մրգեր եւ բանջարեղեն։ Մենք տեսնում ենք արեւը եւ երկիրը։ Աստվածաշունչն ասում է. «Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը»։ Այո, Աստվա՛ծ է ստեղծել այս բոլոր հրաշալի բաները։ Այս ամենի համար մենք պետք է մեր երախտագիտությունը ցույց տանք։ Բայց ամենից շատ պետք է շնորհակալ լինենք Աստծուն՝ այն բանի համար, որ նա մեզ կյանք է պարգեւել։ Մեր երախտագիտությունը նրա հանդեպ մենք կարող ենք

ցույց տալ՝ լսելով նրան ու անելով այն ամենը, ինչ ասում է մեզ Աստվածաշնչի միջոցով։ Դրանով ցույց կտանք մեր սերը Նրա հանդեպ, ով ստեղծել է ամեն բան։

Բայց այս ամենից հետո մարդը դեմ առ դեմ կանգնում է հետեւյալ փիլիսոփայական հարցադրմանը. Ինչի՞ համար ենք մենք աշխարհ գալիս կամ ո՞րն է մեր կյանքի իմաստը...

Մինչեւ այսօր մարդկությունը չի գտել այս հարցի պատասխանը։ Եվ մնում է միայն վայելել այն, ինչը տրված է մեզ։

Գայանե Մկրտչյան
Մեծ Սեպասար

Միշտ «այո՛» ասել Տիրոջ կամքին

Վեցերորդ ամսին Գաբրիել հրեշտակը Աստծու կողմից ուղարկվեց Գալիլիայի մի քաղաք, որի անունը Նազարեթ էր, մի կույսի մոտ, որ նշանված էր Հովսեփ անունով մի մարդու հետ՝ Դավթի տնից: Եւ այդ կույսի անունը Մարիամ էր: Եւ հրեշտակը, գալով նրա մոտ, ասաց. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է»: Իսկ նա այս խոսքերի վրա խռովեց եւ մտքում խորհում էր, թե ինչ բան էր այս ողջույնը: Եւ հրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետեւ Աստծուց դու շնորհ գտար: Եւ ահա՛ դու կհղիանաս եւ կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի եւ Բարձրյալի որդի կկոչվի: Եւ Տեր Աստված նրան կտա նրա հոր՝ Դավթի աթոռը, եւ նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, ու նրա թագավորությունը վախճան չի ունենա»: Իսկ Մարիամը հրեշտակին ասաց. «Ինչպե՞ս այդ կպատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում»: Հրեշտակը պատասխանեց. «Սուրբ Հոգին կգա քո վրա, եւ Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, որովհետեւ նա, որ քեզնից է ծնվելու, սուրբ է եւ Աստծու որդի կկոչվի: Եւ ահա քո ազգական Եղիսաբեթը. նա եւս հղի է իր ծերության մեջ, եւ այս՝ հղիության վեցերորդ ամիսն է նրա, որ ամուլ էր կոչված. որովհետեւ Աստծու համար անկարելի բան չկա»: Եւ Մարիամն ասաց. «Ահավասի՛կ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ»: Եւ հրեշտակը հեռացավ նրանից:

Սա հատված էր Ղուկասի Ավետարանից, որն իր մեջ ամփոփում է հրաշափառ ծննդյան ավետումը։ Բազում կույսերի մեջ Աստծու կողմից ընտրվեց Մարիամը, որպես Աստվածամայր, քանի որ ուներ մեծ եւ մաքուր սիրտ։ Նա իր ազատ կամքով խոնարհվեց Աստծու կամքի առջեւ։ Աստվածամոր որոշումը խոսում է նրա քաջության մասին, որ առանց մի վայրկյան տարակուսելու ընդունեց այդ որոշման ողջ պատասխանատվությունը։ Նրա խոսքը «Թող ինձ լինի քո կամքի համաձայն» խոսում է իր մեծ խոնարհության եւ առ Աստված անսահման հավատի ու նվիրման մասին։ Աստծո կամքի առջեւ Տիրամոր համաձայնությամբ ջնջվում է Եվայի մեղքը, ով դեմ գնաց Տիրոջ խոսքին, մինչդեռ Մարիամը հնազանդվեց եւ փառք տվեց Աստծուն՝ այդ մեծ շնորհի համար։ Մեզնից յուրաքանչյուրը պետք է Աստծու կամքին միշտ ասի «այո՛», սակայն շատերը չեն լսում Աստծու խոսքն ու կամքը. գործում են սեփական հայեցողությամբ։ Բայց Աստծու խոսքն ապրում է մեզնից յուրաքանչյուրի մեջ։ Այն լսելու համար պարզապես անհրաժեշտ է ջերմացնել մեր սրտերը եւ հավատալ։

Գոհար Իվանյան
Բավրա

Իմ աստվածային մայրիկները

«... վեցերորդ ամսում Աստված Գաբրիել հրեշտակին ուղարկեց Գալիլեայի քաղաքներից մեկը, որի անունը Նազարեթ էր՝ մի կույսի մոտ, որը նշանված էր Դավթի սերնդից Հովսեփ անունով մի մարդու հետ։ Այդ կույսի անունը Մարիամ էր։ Գալով նրա մոտ, հրեշտակն ասաց. «Ողջո՛ւյն, ո՛վ շնորհակալ, Տերը քեզ հետ է»։
(Ղկ. 1։26–28)

Այս դրվագում է, որ առաջին անգամ Աստվածաշնչում հանդիպում ենք Մարիամին։ Այստեղ է, որ նա իր կյանքում պետք է լուրջ որոշում կայացներ։ Նա էր, որ Աստծո որդուն պիտի ծներ։ Նա էր, որ պիտի դառնար առողջների եւ հիվանդների, լքվածների եւ աղքատների Մայրը։ Նա սովորեցրեց Հիսուսին քայլել, խոսել. աղոթել, սովորեցրեց անել այն, ինչը մարդկային կյանքը դարձնում է է՛լ ավելի գեղեցիկ։

Մարիամը միայն Հիսուսի մայրը չէ։ Նա բոլորիս Մայրն է, մայր՝ ով միշտ մեր կողքին է, մայր՝ ով մեզ ուղեկցում է ամեն քայլափոխի, մայր՝ ով հրաժարվել է ամեն ինչից՝ Աստծո Որդուն ծնելու համար։
Մարիամը մեզ սովորեցրել է դառնալ Աստծո արժանի զավակ, աղոթել սեփական անձի եւ մարդկության փրկության համար, աղոթել հիվանդների բուժման եւ լքվածների համար, աղոթել նույնիսկ թշնամու համար։
Մարիամն իր Որդու ամենահաղթ խաչի զորությունը հայցելով՝ կատարյալ առողջություն է շնորհում իր ժողովրդին, նա այնքան բարի է, որ ներում է խնդրում մեր բոլոր մեղքերի համար եւ դուրս է բերում մեզ բոլոր ախտերի եւ հիվանդությունների միջից։ Նա բոլորիս բարիքներ է պարգեւում՝ իր մայրական բարեխոսությամբ. միայն անհրաժեշտ է հավատով աղոթել Մարիամին եւ համբերատարությամբ սպասել մեր ցանկության կատարմանը։
Մարիամն իմ հոգեւոր մայրն է, իսկ նրա կատարյալ երկրային մարմնավորումը իմ հարազատ մայրիկն է։ Զէ որ մեր ամենաանիրական թվացող երազանքները կատարում են մեր մայրիկները, ամենաչատը նրանք են հավատում մեզ, նրանք են ոգեշնչում մեզ ամեն-ամեն հարցում, առաջինը նրանք են սրբում մեր արցունքները, երբ մենք լալիս ենք, միայն նրանք են տեսնում մեր ժպտուն աչքերի տակ թաքնված տխրությունը եւ ամեն բան անում՝ մեզ իրական երջանկություն պարգեւելու համար։ Իմ մայրիկն իմ հրեշտակն է, իմ ամենամեծ ձեռքբերումը, իմ հպարտությունն ու հարստությունը։ Նա այն միակն է, ում միշտ երազել եմ նմանվել, ումից օրինակ եմ վերցրել ու երբեք չեմ փոշմանել դրա համար։ Նա իմ կատարյալ օրինակն է թե՛ որպես մայր, թե՛ որպես զավակ եւ թե՛ որպես կին։ Նա իմ անփոխարինելի նվերն է, ում համար Աստծուց ամեն վայրկյան շնորհակալություն եմ հայտնում։
Շնորհակալ եմ Աստծուն, որ ինքս էլ աղջիկ եմ ծնվել, թեկուզ նրա համար, որ ապագայում մի փոքրիկ հրեշտակ ինձ լավագույն պարգեւին է արժանացնելու՝ ինձ «մայրիկ» ասելով։

Կատյա Մարգարյան
Բավրա

Ե՛ս եմ յարութիւնն ու կեանքը: Ա՛ն որ կը հաւատայ ինծի, թէեւ մեռնի՝ պիտի ապրի (Հվհ. 11:25)

Մահ չկա, մարմնական մահ, գուցե, կա, բայց հոգեւոր մահ չկա։ Ի՞նչ է մարմնականը հոգեւորի դեմ. ոչի՛նչ։ Մարմնականը միշտ անցողիկ է, մարդկային մարմինը փոփոխվում է, ծերանում, հիվանդանում, հիմա նույնիսկ մարդ ինքը կարող է, դեմ գնալով բնության օրենքներին ու օրինաչափություններին, փոփոխել սեփական մարմինը, իսկ հոգի՞ն։ Որեւէ մեկը կարո՞ղ է փոխել հոգին։ Ուրեմն, ինչո՞ւ ենք սգում մարմնական կորուստը։ Հաճախ նույնիսկ երբ տեսնում ենք մարմինը, հոգիները գտնվում են կիլոմետրերով հեռու։ Երբ զգում ենք ներկայությունը մարմնի, ինչ-որ բան պակասում է։ Որովհետեւ այն ինչ մարմնական է, ժամանակավոր է միշտ։
Հաճախ մենք կորցնում ենք մեզ հարազատ դարձած մարդկանց, նույնիսկ՝ նրանց կենդանության օրոք, ոչ որովհետեւ դադարում ենք տեսնել, շոշափել նրանց մարմինը, այլ որովհետեւ հոգին չի կարողանում կապ գտնել նրանց հետ։
Հիսուս ասաց՝«Ես եմ հարությունը եւ կյանքը: Նա, ով հավատում է ինձ, նույնիսկ եթե մեռնի, կապրի» (Հվհ. 11:25)
Ուրեմն, ունենալ հավատ այստեղ, սիրել Հիսուսին այս կյանքում, նշանակում է հավերժական երջանկություն՝ Աստծո գրկում, սրբերի ու հրեշտակների կողքին։ Հավատալ, որ մահից հետո կա այլ՝ ավելի կարեւոր ու ավելի գեղեցիկ կյանք, ստիպում է մեզ ապրել երկրայինն ու անցողիկը ավելի երջանիկ ու սուրբ։
Սգալ մարմնական կորուստը, նույնն է՝ ինչ չընդունել, որ Հիսուս հարություն առավ։
«Եվ ամեն ոք, ով ողջ է ու հավատում է ինձ, երբեք չի մահանա» (Հվհ. 11:26)։
Զի մեռնի, որովհետեւ հոգին անմահ է, իսկ հավատով լցված հոգին՝ օրհնված։ Զի չմեռնի, որովհետեւ հոգեւոր մահ չի ճաշակի այն մարդը, ով հավատում է, որ իր Արարիչը հանուն իր մեղքերի հալածվեց, խաչվեց, թաղվեց, բայց չապականվեց, հաղթեց մահվանը ու չդարձավ մահկանացու, հաղթեց մահվանը եւ մեզ եւս հնարավորություն տվեց Իր հաղթանակի պտուղները ճաշակելու։
Իհարկե, մարմինը միշտ տկար է, մարմինը միշտ այլ բանի կարիք է զգում, միշտ այլ բանի մեջ է երջանկություն գտնում, միշտ թույլ է գտնվում, բայց անգամ այդ թուլության ժամանակ, պետք է հիշել Հիսուսի խոսքերը՝ «Աշխարհի մէջ տառապանք պիտի ունենաք, բայց քաջալերվե՛ք, ես հաղթեցի աշխարհին» (Հվհ. 16:33) եւ, ամենակարեւորը, Նա հաղթեց մահվանը նշանակում է՝ հաղթահարել թուլությունը եւ դժբախտությունը։
Եվ, վերջապես, «մահը չէ մեծագույն կորուստը կյանքում, մեծագույն կորուստը այն է, ինչ մեռնում է մեր մեջ՝ մեր կենդանության օրոք» (Նորման Քուզինս)։

Բոլոր այն մարդիկ, ովքեր կորցրել են իրենց համար կարեւոր մարդկանց հետ շփումը ֆիզիկապես, թո՛ղ գտնեն հանգստություն Աստծո հետ շփման մեջ, թո՛ղ փորձեն մի պահ զգալ նրանց հոգեւոր ներկայությունը՝ այն ներկայությունը, որը ոչինչ ու ոչ ոք երբեք չի կարող խզել։
Ուզում եմ, որ Տիրամոր բարեխոսությամբ ու Աստծո ողորմածությամբ յուրաքանչյուրս կարողանանք հաղթահարել մարմնական կորուստն ու ցավը ու ամենակարեւորը՝ երբեք չկորցնենք հոգեւոր կապն ու հոգեւոր երջանկությունը։
Թող Աստծո սերն ու ողորմությունը բոլորիս հետ լինեն։
Ամեն։

«Ուզում եմ շատ ու շատ ապրել, Տեր,
եթե Քո կամքը դա է.
կամ էլ շուտով ճախրել դեպ Երկինք,
եթե հաճելի է Քեզ:
Սերը՝
հուրն այս երկնային,
սպառում է ինձ միշտ:
Ի՞նչ կարեւորություն ունեն կյանքն ու մահը.
իմ միակ բերկրանքը սերդ է». Սբ. Թերեզա Հիսուս Մանկան

Նաիրա Ղազարյան
Ղազանչի

Գնահատե՛նք մեր կյանքը

Կյանքը մեր ունեցած ամենաթանկ նվերն է՝ Աստծո կողմից, մենք ամենաշատը մեր կյանքը կորցնելուց ենք վախենում ու ինչքան էլ հոգնած լինենք այս կյանքից, ինչքան էլ չուզենանք ապրել, վախենում ենք, երբ վտանգ ենք զգում, տագնապի մեջ ենք հայտնվում, ամեն ինչ անում ենք վտանգից ազատվելու համար, քանի որ առանց կյանքի՝ ոչինչ այլեւս նշանակություն չի ունենա։
Կյանքը գեղեցիկ է, աշխարհն է «կեղտոտ», աշխարհն է մարդկանց փոխում, չարացնում, աշխարհում է ամեն մի գեղեցիկի կողքին չարը, «տգեղը», սիրո կողքին՝ ատելություն, եւ խաղաղության կողքին՝ պատերազմներ։ Ինչ ասես որ չի կատարվում աշխարհում, ամեն օր մի նոր իրադարձություն է տեղի ունենում, որը խառնում է ամեն ինչ, որն ստիպում է մարդկանց ատել միմյանց ու ավելի չարանալ միմյանց հանդեպ։
Հիմա էլ աշխարհում տեղի է ունենում իրադարձություն, որի պատճառով մարդիկ տագնապի մեջ են, մարդկանց մի մասը վախենում է ու խուճապի մեջ է, մյուս մասը՝ վախենում է, բայց չի բարձրաձայնում, չի ուզում հավատալ, չի ուզում ինքն իրեն ներշնչել, ու վստահ եմ, ճիշտ է անում։ Իհարկե, բոլորս էլ վախենում ենք, որովհետեւ խոսքը մեր կյանքի մասին է, բայց դա չի նշանակում, որ պիտի խուճապի մատնվենք, չի նշանակում, որ պիտի հուսահատվենք։ Ընդհակառակն, պետք է ուժեղ լինենք, միասնական, պատրաստ մեկ մեկու օգնելու, պետք է հավատանք Աստծուն ու աղոթենք աշխարհում տիրող վիճակի բարելավման համար, որպեսզի ինչքան հնարավոր է շուտ ավարտվի այս ամենը, վերադառնանք մեր բնականոն կյանքին, դուրս գանք փողոց, հանդիպենք ընկերների հետ։
Հիմա ժամանակն է հասկանալ ու ընդունել շատ բաներ։ Գուցե, հենց այսպիսի մի իրավիճակ էր պետք մեզ՝ կյանքը գնահատելու համար։ Որպեսզի գնահատենք մեր կյանքում տեղի ունեցող ամեն մի մանրուքը, թեկուզ ուղղակի փողոց դուրս գալը։
Շուտով, վստահ եմ, կավարտվի այս ամենը, ամեն ինչ իր տեղը կընկնի, կրկին աշխատանքի ու դասի կգնանք, կհանդիպենք մեր ընկերներին, իրար տեսնելուց երկար կգրկախառնվենք, կշփվենք մարդկանց հետ ու երջանիկ կզգանք ինքներս մեզ։ Իսկ հիմա եկե՛ք ուժեղ լինենք ու միասնական պայքարենք աշխարհում տիրող այս իրավիճակի դեմ՝ առանց խուճապի ու չարության, եկե՛ք բարի լինենք միմյանց հանդեպ, որովհետեւ վաղ թե ուշ բարին հաղթում է չարին։

Ջուլյետա Պետրանյան
Մեծ Սեպասար

Տիրամայրը երիտասարդների Մայրն է



Հիսուսի վերջին պատգամն այն էր, որ Իր մայրը լինի բոլորի մայրը, եւ Մարիամը կատարեց իր որդու վերջին պատգամը: Կատարելով պատգամը նա դարձավ այն բոլոր մարդկանց մայրը, ովքեր ծնվել էին իրենից առաջ, իր ապրած ժամանակում եւ դրանից հետո էին ծնվելու: Դառնալով մեր մայրը՝ չնայած այն բոլոր մեղքերին, որ մենք գործել ենք, նա մնում է մեր կողքին եւ ամեն բան, որ մենք կխնդրենք նրանից նա կբարեխոսի Աստծո մոտ եւ մենք կստանաք: Նա ներում է մեզ անգամ այն դեպքում, երբ երես ենք դարձնում նրանից, ներում է այնպես ինչպես կներերեր մեր հարազատ մայրը:

Սրբուհի՛ Կույս Մարիամ, Տիրամա՛յր, ով երբեք չի թողել իրեն օգնության կանչող երեխային, մայր, որի ձեռքերն անհոգնել գործում են հանուն իր սիրելի զավակների, որովհետեւ նրանց չարժիչն Աստվածային սերն է եւ անսահման ողորմածությունը, որոնցով լի է մեր սիրելի մոր սիրտը: Մեզ դարձրու՛ քո հայացքը՝ լի ողորմածությամբ, նայի՛ր սատանայի այն փորձություններին, որոնք խեղդում են մեր կյանքը: Դու գիտես մեր հուսահատությունն ու ցավը, Դու Տեսնում ես, որքա՛ն են այդ փորձությունները մեզ կաշկանդում: Սուրբ Մարիա՛մ, Տերը Քեզ է պատգամել՝ օգնել մեզ՝ դուրս գալու այդ ահավոր բարդ ու խավար փորձություններից, ուստի Քո ձեռքն եմ հանձնում կյանքիս թելը, քանզի չկա մի հանգույց, որ չարձակվի քո ձեռքերում: Ամենասու՛րբ Մայր, Քո բարեհոգության ու Որդուդ՝ Հիսուս Քրիստոսի, իմ Փրկչի առջեւ քո բարեխոսության ուժով ընդունի՛ր այսօր իմ «փորձությունն» ու օգնի՛ր, որ ազատվեմ դրանից: Հանուն Տիրոջ փառքի աղաչում եմ քանդել այն, արձակել այս կապն առհավետ:

Դու ես մեր Հույսը, Ամենասրբուհի: Մեր ամոքողն ես, սփոփողը, մեր նվազ ուժերի ամրացնողն ես, Հարստությունն ես մեր՝ աղքատության մեջ, ազատագրումն ես ամենից, ինչ խանգարում է լինել Քրիստոսի հետ: Լսի՛ր մեր պաղատանքը: Պահպանի՛ր մեզ, ուղղորդի՛ր մեզ, պաշտպանի՛ր մեզ: Դու մեր հուսալի Ապաստանն ես: Մարիամ, իմ Տիրամա՛յր, որ արձակում ես քարկապերը, աղոթի՛ր ինձ համար: Ամեն:

Ֆրիդա Մուրադյան
Բավրա

Ցավերի Մայրը

Հուստինոս Վկան «Երկխոսություն Թրիփոն հրեայի հետ» աշխատության մեջ գրում է.

«…ինչպես որ նախամոր՝ Եվայի պատվիրանազանցության (անհնազանդության) պատճառով մարդկությունը ընկավ մահվան անեծքի տակ, այնպես էլ Մարիամ Աստվածածնի սուրբ հնազանդությամբ՝ գտավ կյանք՝ հանձին Հիսուս Քրիստոսի»։

Սուրբ է Մարիամը օրհված է բոլոր կանանց մեջ, բոլոր կանանցից վեր է, քանի որ Սուրբ է Նրա պտուղը, Նրա միածին Որդին, Նա զրկված է Ադամական մեղքից, հնազանդ է Տիրոջը, բարի է ու առաքինի, ու չնայած այս ամենին, Նա նույնպես կրել է ցավեր, ու Իր կրած ցավերն ու վերքերը մեծագույնն են եղել…

Տիրամոր կրած յոթ գլխավոր վերքերը կամ ցավերը մարեմաբանության մեջ արծարծված թեմաներից մեկն է։ Աստվածամոր կրած առաջին ցավը Սիմեոն ծերունու մարգարեանալն էր. «Իսկ քո [Մարիամի] հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերի խորհուրդներ հայտնի դառնան» (Ղուկ. 2.35)։ Երկրորդ ցավը մանուկ Հիսուսին Հերովդես թագավորի դաժանությունից փրկելու համար Եգիպտոս փախչելն էր։ Երրորդ ցավը Մարիամը կրեց այն ժամանակ, երբ տասներկու տարեկան Հիսուսին Տաճարում կորցրեց։ Չորրորդ ցավը Աստվածամայրն ապրել է, երբ Հիսուսին դատապարտեցին եւ որդին խաչն ուսերին առած բարձրացավ Գողգոթա լեռը։ Հինգերորդ վերքը Տիրամայրը ստացել է, երբ Որդուն խաչել են։ Վեցերորդ ցավը Կույս Մարիամը կրել է, երբ Հիսուսը հոգին ավանդել է, տեգով խոցել են նրա կողը եւ մարմինը խաչից իջեցրել։ Իսկ վերջին՝ յոթերորդ անգամ Տիրամոր սիրտը խոցվեց իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի թաղման ժամանակ։

Ինչպես որ սուրբ Մարիամը, այնպես էլ աշխարհում միլիոնավոր մարդիկ կրել են ու դեռ շարունակում են կրել ցավեր ու վերքեր, շատերը հենց իրենց իսկ մեղքերի պատճառով։ Ոմանք հոգով են հիվանդ, ոմանք մարմնական ցավեր ունեն, ոմանց տանջում են առօրյա հոգսերը, ուրիշներն էլ իրենց մտքով են հիվանդ։ Իրենց ցավերը հաղթահարելու գործում նրանց օգնության են գալիս բժիշկները, հոգեբանները, բարի եւ խելացի մարդիկ, ինչու՞ չէ՝ նաեւ լավ գրքերը։ Բայց ոչ ոք չի կարող նրանց այնպիսի օգնություն ցույց տալ, ինչպիսին Աստվածամայրն է տալիս։ Կույս Մարիամը միշտ նրանց կողքին է, ովքեր կանչում են իրեն, ովքեր

օգնություն են խնդրում իրենից, ովքեր զգում են իր կարիքը։ Տիրամայրն է հիվանդների եւ ցավերի մայրը, Նա է նրանց հույսն ու ապավենը, սուրբ Մարիամն է միակ փրկությունը…

Կան մարդիկ, որ գտնվելով հենց մահվան մահճում, իմանալով, որ այլեւս հույս չկա, որ վերջը մոտ է, անկախ ամեն ինչից դիմում եմ Տիրամոր օգնությանը, հավատում են Նրան, ուզում են, որ վերջինս իրենց կողքին լինի, իրենց կյանքի վերջին րոպեներին ուզում են վայելել Տիրամոր բարեհաճությունը։ Կան նաեւ այնպիսի մարդիկ, որ նույնիսկ ամենաչնչին բանից իրենց պարտված են զգում, հանձնվում են, չեն աղոթում կամ էլ օգնություն խնդրում, չեն վստահում սուրբ Մարիամին…

Ճիշտ է՝ երբ մարդ ինչ-որ մեղք է գործում, նա արդեն հիվանդ է հոգով եւ մտքով, իսկ երբ հասկանում է սխալը, նրան է տանջում մեղքի զգացումը, նա տանջվում է, ցավեր է ունենում, ներում է խնդրում Աստծուց։ Բայց մինչ մեր աղոթքը կհասնի Տիրոջը, անհրաժեշտ է խնդրել Աստվածամոր բարեխոսությունը, քանի որ Նա է բարեխոսում մեզ համար, մեր մեղքերի թողության, մեր հոգու հանգստության ու առողջության համար։ Նա է, որ կրելով աշխարհի վատթարագույն ցավերն ու վերքերը, կորցնելով իր Միածին Որդուն ու մեր Փրկչին, անցնելով այդ դժվարին ճանապարհը, մեզ է առաջարկում իր օժանդակությունը, բարեխոսում է մեզ համար, քանի որ Նա նույնպես ցավ է ապրում մեզ հետ միաժամանակ՝ տեսնելով մեր ցավերն ու հիվանդությունները, իսկ առավել շատ ցավ է զգում այն դեպքում, երբ մենք, մեղք գործելով հանդերձ, ըմբոստանում ենք Իր եւ Իր Որդու դեմ։

Կարծում եմ՝ ժամանակն է առավել շատ կենտրոնանալու մեր արարքների ու խոսքերի վրա, առավել քիչ թվով մեղքեր գործելու եւ ցավ պատճառելու թե՛ ինքներս մեզ, թե՛ Տիրամորը, աղոթելու ու ներում խնդրելու, սրտով խոսելու Աստծո հետ, առավել շատ հոգեւոր գրականություն ընթերցելու, վերահսկելու մեզ։

Կյանքիս ամենադժվարին պահերին սուրբ Մարիամն ինձ ու իմ ընտանիքի կողքին է եղել, Նա է մեզ հույս տվել, Նա է առաջնորդել մեզ ճիշտ ճանապահով, Նա է, որ օգնել է մեզ ամենից շատ, Նա է, որ ապաքինում է մեր սպիացած վերքերը, Նրա շնորհիվ է, որ մենք հիմա ապրում ենք, ողջ ենք ու առողջ։

Երբ շատ տխուր եք լինում, երբ ինչ-որ ցավեր եք ունենում, երբ տանջվում եք ինչ-որ բանից, երբ ուղղակի ցանկանում եք կիսվել ձեր խնդիրներով մեկի հետ, խոսել, երբ ձեր հոգին ցավում է, դիմե՛ք Տիրոջ եւ Աստվածամոր օգնությանը, Նրանք կլսեն ձեզ, կօգնեն, եթե միայն անկեղծ լինեք, կբուժեն ձեր վերքերը…

«…Նա է սովորեցրել Հիսուսին քայլել, աղոթել, լվացվել, անել այն ամենը, ինչը մարդու կյանքը դարձնում է այդքա՛ն գեղեցիկ։ Եվ նույնը նա շարունակում է անել այսօր։ Նա միշտ պատրաստ է օգնել մեզ եւ սովորեցնել, թե ինչպես սիրենք Հիսուսին, ինչպես հպվենք Նրան, ինչպես տեսնենք Նրան, ինչպես ճանաչենք Նրան՝ հիվանդների ու կարոտյալների մեջ, ինչպես ծառայենք Նրան…»։ Սբ. Մայր Թերեզա

Վեներա Պետրոսյան
Բավրա

Ընթերցանությունը՝ երիտասարդության մեջ

Հաճախ ենք տեսնում ավագ սերնդի շատ ներկայացուցիչների, ովքեր անընդհատ ասում են, թե 21-րդ դարի երիտասարդությունը կարդալ չի սիրում։ Այս հարցին բոլոր երիտասարդները միանշանակ կպատասխանեն, որ խնդիրը համակարգիչն է, հեռախոսը, ինտերնետը…. Իհարկե նրանք ճիշտ են, որովհետեւ ինտերնետը դարձել է այսօրվա երիտասարդության առօրյայի անբաժանելի մասը։ Եւ օրվա մեծ մասը նրանք անց են կացնում վիրտուալ «կյանքում»։ Ժամանակակից աշխարհում ավելի դժվար է դարձել երեխային ստիպել գիրք կարդալ։ Աշխարհն արագորեն փոխվում է, դառնում է ավելի վիրտուալ, այդ պատճառով ընթերցանության խթանման ձեւերը նույնպես պիտի փոփոխվեն եւ համապատասխանեն ժամանակի պահանջներին։ 21-րդ դարի երիտասարդությունը առանձնապես չի փայլում ընթերցասիրությամբ, բայց եւ կարող ենք առանձնացնել մի որոշ դրասեր հասարակության, ովքեր իրենց օրը չեն պատկերացնում՝ առանց մեկ-երկու էջ կարդալու։ Ընթերցանությունը շատ կարեւոր է, հատկապես, երիտասարդ տարիքում։ Քանի որ գրքի շնորհիվ մարդ մի որոշ չափով դառնում է ավելի իմաստուն եւ պատրաստ կյանքի տարբեր հարվածներին։ Ընթերցանությունը, գրքերի հանդեպ սերը անհատների մեջ պետք է սերմանել փոքրուց, որպեսզի երբ մեծանան, հասկանան գրի ու գրականության արժեքը եւ «գիրք» բառը լսելիս՝ չպատկերացնեն վառելիք կամ անպիտան մի առարկա։

Անուշ Վանոյան
Սարագյուղ

Օգնի՛ր ինձ Մարիամ

Օգնի՛ր ինձ, ո՛վ Կույս
Իմ մա՛յր Մարիամ,
Որ իմ հոգին միշտ անաղարտ մնա,
Անիրավ կյանքից ես շատ եմ դժգոհ։
Օգնի՛ր ինձ, որ ես էլ քո սրտի նման
Մեծ սիրտ ունենամ, սիրեմ բոլորին, բարուն ու չարին։
Չէ՛ որ քո սրտին մեծ վիշտ է դրվել,
Քո միակ որդուն խաչին են գամել,
Բայց միեւնույն է, դու նույն բարին ես,
Ու բոլորին ես դու շատ-շատ սիրում։
Խնդրում եմ, մա՛յր իմ,
Ո՛վ Սուրբ Տիրամայր, լինես մեր կողքին
Ու միշտ քո սիրով ու քո մայրական բարի աղոթքով
Մեզ սովորեցնես լինենք բարի՛, հե՛զ։
Օգնի՛ր ինձ, մա՛յր իմ, ո՛վ կույս Մարիամ
Լսու՞մ ես, մա՛յր իմ,
Օգնի՛ր ինձ, որ ես էլ միշտ բարի մնամ։

Ռուզաննա Աթանեսյան
Ղազանչի

Հոկտեմբերը՝ Վարդարանի Տիրամորը նվիրված ամիս է. աղոթե՛նք Վարդարան



Վարդարանի աղոթքի ձեւը՝ աղոթահամրիչի վրա, պատկերը՝ hycatholic.ru կայքից

«Մարիամի հետ՝ աղօթել Քրիստոսին»
Սբ. Յովհաննէս Պօղոս Բ

Վարդարանը Աստուածամօրը նուիրուած ավանդական մի աղօթք է, որը շատ սիրելի է յատկապէս կաթողիկէ հաւատացեալների համար եւ մեծ տարածում ունի, մանաւանդ, կաթողիկէ աշխարհում։ «Վարդարան» բառը նշանակում է «վարդերի պարտէզ»։ Անուանումը ծագել է Աստուածամօրը վարդեր նուիրելու հին սովորութիւնից. այս աղօթքը նմանեցուել է վարդերի մի փնջի, որ ամէն անգամ հաւատացեալը նուիրում է Սուրբ Կոյսին։ Իր երեւումների ժամանակ Աստուածածինն ինքն է ասել, թէ ամէն մի «Ողջո՛յն քեզ, Մարիամ...» աղօթքն ասելիս՝ իրեն ենք նուիրում մէկ վարդ։ Վարդարանը Աստուածամօր բարեխօսութիւնը հայցող մի աղօթք է, որը միաժամանակ հրաւիրում է խորհրդածել Տէր Յիսուս Քրիստոսի երկրային կեանքի դրուագների մասին՝ Աստուածամօր առաջնորդութեամբ եւ նրա հետ միասին։ Ինչպէս ասում էր մեծ մարեմասէր Սուրբ Լուի Մարի Գրինեոն դե Մոնֆորը, «դէպի Քրիստոս՝ Մարիամի միջոցով»։ Սբ. Յովհաննէս Պօղոս Բ. Քահանայապետը Վարդարանին նուիրուած իր գրութեան մէջ ասում է. «Վարդարանի միջոցով հաւատացեալները ստանում են առատ շնորհներ՝ անմիջապէս Փրկչի Մօր ձեռքերից»։ 1917թ. Ֆաթիմայում Աստուածամօր երեւումներին ականատես Քոյր Լուսիան ասում էր. «Չկայ

մի խնդիր, ինչքան էլ բարդ լինի, նիւթական կամ հոգեւոր, մեր անձնական կամ ընտանեկան կեանքում...որ հնարաւոր չլինի լուծել Վարդարան աղօթելով»։

Վարդարանի աղօթքի պսակը բաղկացած է հինգ տասնեակ եւ եւս երեք հրեշտակային ողջոյններից, որոնցից առաջ աղօթում ենք Տէրունական աղօթքը, իսկ յետոյ՝ «Փառք Հօր...» աղօթքը եւ եւս մէկ աղօթք՝ աւանդուած Ֆաթիմայում Տիրամօր երեւումներից։ Իւրաքանչիւր տասնեակ նուիրուած է Տիրոջ կամ Տիրամոր կեանքի մէկ դրուագի խորհրդածութեան։ Այդ դրուագները կոչւում են «խորհուրդներ», հետեւաբար դրանց մասին խորհրդածութիւնը ինքնին մեզ համար աստուածային շնորհներ ընդունելու եզակի առիթ է։ Շաբաթուայ իւրաքանչիւր օրուայ համար նախատեսուած է խորհուրդների մէկ խումբ։ Վարդարանի համար նախատեսուած է այդպիսի քսան խորհուրդ՝ չորս խմբերով, իւրաքանչիւրի մէջ՝ հինգ խորհուրդ. Վարդարանի խորհուրդների չորս խմբերն են՝ Ուրախութեան, Փառաւորման, Լոյսի եւ Տրտմութեան։

Վարդարանի պատմությունը

Վանական աղօթքի ավանդույթը կարեւորում է Աստծո ներկայության մշտական զգացողության անհրաժեշտությունը։ Լսելով «Անդադար աղօթեցե՛ք» (Ա Թեսղ. 5։17) կոչը եւ հետեւելով Քրիստոսի օրինակին՝ մեկը մյուսի հետեւից (ճգնավորները, բենեդիկտյանները, ցիստերցյանները, կարտուզիականները) Տիրոջն օրհնում էին ցերեկվա ու գիշերվա տարբեր ժամերին աղօթելով «Հայր մեր»-ը կամ սաղմոսները։ Արեւելքի քրիստոնյաները, ովքեր աճել էին աստվածահայեցողության ավանդույթի մեջ, առօրյա կյանք ներմուծեցին Սուրբ Գրքից ընտրված հատվածների կամ էլ Հիսուսի աղօթքի՝ «Տե՛ր Հիսուս Քրիստոս, Որդի Աստծո, ողորմի՛ր ինձ», կրկնությունը։ Նրանք այդ աղօթքը արտասանում էին շնչառության ռիթմով, օգտագործում էին քարեր, որպեսզի կենտրոնային ու հաշվից չչեղվեին։ Արեւմուտքում, 8-րդ եւ 9-րդ դարերում վանքերում չկրթված աշխարհականներին սովորեցնում էին աղօթել։ Նրանք սովորում էին արտահայտություններ Սուրբ Գրքից, օրհներգություններ եւ «Տերունական» աղօթքը։ Այսպիսի փոխարինող սաղմոսարանն օգնում էր նաեւ վանականներին, ովքեր անգամ ֆիզիկական աշխատանք կատարելիս կարող էին ասել հարյուր հիսուն աղօթք, որը համապատասխանում էր սաղմոսների թվին։

Հետզհետե՝ Սուրբ Աստվածածնի պաշտամունքի հետ կապված, մտավոր աղօթքում նոր ուղղություններ առաջացան։ Վարդարանի «Ողջո՛յն քեզ Մարիամ» (Ave Maria) աղօթքը ի հայտ է եկել 13-14-րդ դարերի ընթացքում, երբ միահյուսվեցին Հրեշտակային ողջույնի ավետարանական խոսքերը եւ Սուրբ Եղիսաբեթի խոսքերը։ Ժանտախտի համաճարակը, որը ոչ ոքի չխնայեց միջնադարյան Եվրոպայում, հանգեցրեց նրան, որ «Ողջոյն քեզ, Մարիամ» աղօթքին միացրեցին Մարիամին ուղղված խնդրանքը՝ «բարեխօսեա՛ վասն մեր՝ մեղաւորացս, այժմ եւ ի ժամու մահուան մերոյ. ամեն»։ Պատահել է, որ մոտ 50 կամ 150 անգամ կարդացել են «Ողջույն Մարիամ»՝ ի հիշատակ աշխարհի արարման։ Աստիճանաբար, միացվել են 150 այլ դիտավորություններ։

Հետաքրքիր են «Վարդարան» աղօթքի անվան ծագման հետ կապված վարկածները։ Դրանցից մեկը մեզ տանում է դեպի Արեւելքի հին ավանդույթները, որտեղ մարդիկ աղօթական խորհրդածության ժամանակ օգտագործում էին աղօթքի պսակ կամ աղօթահամրիչ։ Հնդկական «japamala» բառը նշանակում է «աղօթքների հավաքածու» կամ «վարդերի ծաղկեփունջ» (japa – վարդ), որն օգտագործվում էր համրիչի վրա աղօթքի իմաստով։ Աղօթքի այդ ձեւը 8-9-րդ դարերում ներթափանցեց իսլամ, իսկ 12-13-րդ դարերում՝ քրիստոնեություն։ Դոմինիկյան միաբան Վիլհելմ դե Ռուբրուկը, ով որոշ ժամանակ ապրել էր թաթարների հետ, գրում է. «Նրանք եւս մեզ նման կրում են աղօթահամրիչներ»։ Արեւմտյան ավանդույթյան մեջ կա պատմություն՝ ցիստերցյան մի միաբանի մասին, ում Կույս Մարիամն ասում է, որ իր ոտքերի տակ դրված ծաղկեպսակը կարելի է փոխարինել «վարդերի պսակով»՝ «Ողջույն քեզ, Մարիամ» աղօթքի բազմակի կրկնողության տեսքով։

15-րդ դարում աղօթքի երկու կողմերը վերջականապես միահյուսվեցին՝ աղօթքի բազմակի կրկնությունն ու Հիսուսի եւ Մարիամի կյանքի իրադարձությունների մասին ավետարանական եւ ավանդական պատմությունների մասին խորհրդածությունը։

Վարդարանի տարածմանը մեծապես նպաստել են դոմինիկյանները, ովքեր սովորեցնում էին աղօթել՝ միաժամանակ խորհրդածելով Աստվածաշնչի մասին։ Մի դոմինիկյան Բրետոնից, Երանելի Ալեն դե լա Ռոշը (Alain de la Roche), կանոնավորեց տարբեր ավանդույթներն ու Վարդարանի աղօթքները բաժանեց 15 տասնյակի (1 «Հայր մեր», 10 «Ողջույն Մարիամ»), որոնք էլ իրենց հերթին բաժանված էին երեք մասի։ Նա այդ Վարդարանն անվանեց «Հիսուսի ու Մարիամի Սաղմոսարան»։

Սբ. Դոմինիկոսի տեսիլքը, նկ.՝ Bernardo Cavallino, 1640թ.

15-րդ դարում ի հայտ եկան Վարդարանի եղբայրությունները, որոնց համար առաջին կանոնադրությունը տվել է սուրբ Անդրեյ Քյոլնեցին՝ դոմինիկյան վանահայրը։ Հայտնի է նաեւ Վարդարանի առաջի պատկերը (մոտ 1500 թ.), որտեղ՝ ձեռքին Վարդարան բռնած, պատկերված է Մարիամը՝ Փոքրիկ Հիսուսի հետ, նրա կողքին ծնկի են իջած սուրբ Դոմինիկոսն ու նահատակ Պյոտր Վերոնացին, իսկ թիկնոցի տակ հավաքված են մեծաթիվ հոգեւորականներ ու աշխարհականներ։

16-րդ դարում ապրած կարտեզիական Դոմինիկ Պրուսսացու շնորհիվ հայտնի դարձավ Սուրբ Դոմինիկոսի մասին ավանդությունը, որի համաձայն, նա Կույս Մարիամից ստացել է մարգարտե վարդարան, որպես զենք՝ ալբիգոյացիների հերետիկոսության դեմ հոգեւոր պատերազմում։

Վարդարանը ձեւավորվել է դարերի ընթացքում եւ չի կարելի նրա հայտնվելը, ծնվելը վերագրել միայն որեւէ մեկ անձի։ Անկասկած է այն, որ Սուրբ Դոմինիկոսի միաբանության թափառող քարոզիչներն, ովքեր հատեցին ամբողջ Եվրոպան, էապես նպաստեցին այս աղոթքի տարածմանը։

Սուրբ Աստվածածնի Վարդարանը 1569թ. պաշտոնապես հաստատեց Պիոս Ե Քահանայապետը (ի դեպ, դոմինիկյան միաբան)։

Քահանայապետերից շատերն են Վարդարան աղոթել, նրանց թվում՝ Լեւոն ԺԳ, երանելի Հովհաննես ԻԳ, Պողոս Զ, Հովհաննես Պողոս Բ։ Վերջինս իր «Կույս Մարիամի Վարդարանը» ուղերձով, որը գրել է 2002թ-ին, Վարդարանը լրացրեց Լույսի խորհուրդներով։

Վարդարանը երկմակարդակ աղոթք է։ Առաջի մակարդակն իրականացվում է աղոթքի որոշակի տեխնիկայի կիրառմամբ. դա աղոթքի ռիթմիկ կրկնությունն է։ Խոսքերի մեղեդայնության ու ռիթմի շնորհիվ սիրտն ու գիտակցությունը ազատվում են մտքերի հոսքից ու զգացմունքներից՝ կենտրոնանալով դեպի աստվածայինը։ «Հայր մեր» կամ «Հրեշտակային ողջույնը» աղոթքների խոսքերը մեզ օգնում են սրտով զգալ սրբերի օգնությունը։ Կրկնությունը այն մեթոդներից մեկն է, որը մտորման ժամանակ օգնում է հիշել ու զգալ Սուրբ Երրորդության Անձանց ու Սուրբ Մարիամի ներկայությունը։ Սուրբ Կույսին կանչելը թույլ է տալիս տեսնել, թե ինչպես է Փրկչի անունը ներթափանցում մեր կյանք։ Ռիթմիկ կրկնության մակարդակը սերտորեն կապված է համրիչի օգտագործման հետ, որն օգնում է չափել աղոթքի ռիթմն ու կենտրոնանալ։

Վարդարանի խորհուրդներն անվանում են Փոքրիկ Աստվածաշունչ։ Դժվար է գերագնահատել այն դերը, որն ունեցել է վարդարանը կաթողիկէ հավատացյալների աստվածաշնչյան գիտակցության ձեւավորման վրա։ Դրանք հատկապես վերաբերում են Հիսուս Քրիստոսի մասին վարդապետությանը։ Ուրախության խորհուրդները նկարագրում են Աստծո Որդու մարդեղությունը եւ Հիսուսի մանկությունը։ Տրտմության խորհուրդները մեզ մոտեցնում են Նրա չարչարանքներին ու մահվանը։ Փառավորման խորհուրդները մեզ հիշեցնում են, որ մեր Հովիվը հարություն է առել։ Այնուամենայնիվ, Ավետարանը մնում է չգերազանցված։ Մկրտությունը Հորդանանում, Կանայում կատարված առաջին հրաշքը, Բարի Լուրի ավետիսը եւ դարձի գալու կոչը, Վերափոխումն ու Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատումը մեզ օգնում են տեսնել, որ Քրիստոսի խորհուրդների հարստությունը դեռեւս բաց է մեր առջեւ։

Լեպանտոյի ճակատամարտը, նկ.՝ Paolo Veroneze

Հրաշքով հաղթանակը եւ Վարդարանի տոնը՝ հոկտեմբեր ամսին

1571թ. հոկտեմբերի 7-ին Հունաստանի արեւմտյան մասում գտնվող Լեպանտո բնակավայրի մոտ, Իոնական ծովում տեղի ունեցավ մի պատմական ճակատամարտ, որտեղ կաթողիկէ պետությունների «Սրբազան Լիգայի» նավատորմիղը հաղթանակ տարավ Օսմանյան կայսրության նավերի հանդեպ։ Թուրքական նավատորմիղի ուժերը մի քանի անգամ գերազանցում էին Լիգայի ուժերին, եւ ամբողջ Եվրոպան կանգնած էր թուրքական ներժուժման վտանգի առջեւ։ Պիոս Ե Քահանայապետը, որ թուրքերի դեմ պաշտպանության հիմնական առաջամարտիկներից մեկն էր, խնդրեց բոլոր եկեղեցիներում այդ օրը միասնաբար աղոթել Սուրբ Վարդարան եւ խնդրել Աստվամոր օգնությունը Լիգայի ուժերի համար։ Սուրբ Կույսը ցույց տվեց, որ Ինքը պաշտպանում է իր Սուրբ Եկեղեցին եւ լսում իր զավակների աղոթքը։ Այս հաղթանակից հետո Պիոս Ե Քահանայապետը հոկտեմբերի 7-ը հռչակեց Վարդարանի Տիրամոր տոն եւ ամբողջ հոկտեմբեր ամիսը նվիրվեց Վարդարանի աղոթքին։

Քահանայապետերից շատերն են Վարդարան աղոթել, նրանց թվում՝ Լեւոն ԺԳ, երանելի Հովհաննես ԻԳ, Պողոս Զ, Հովհաննես Պողոս Բ։ Վերջինս իր «Կույս Մարիամի Վարդարանը» ուղերձով, որը գրել է 2002թ-ին, Վարդարանը լրացրեց Լույսի խորհուրդներով։

Վարդարանը երկմակարդակ աղոթք է։ Առաջի մակարդակն իրականացվում է աղոթքի որոշակի տեխնիկայի կիրառմամբ. դա աղոթքի ռիթմիկ կրկնությունն է։ Խոսքերի մեղեդայնության ու ռիթմի շնորհիվ սիրտն ու գիտակցությունը ազատվում են մտքերի հոսքից ու զգացմունքներից՝ կենտրոնանալով դեպի աստվածայինը։ «Հայր մեր» կամ «Հրեշտակային ողջույնը» աղոթքների խոսքերը մեզ օգնում են սրտով զգալ սրբերի օգնությունը։ Կրկնությունը այն մեթոդներից մեկն է, որը մտորման ժամանակ օգնում է հիշել ու զգալ Սուրբ Երրորդության Անձանց ու Սուրբ Մարիամի ներկայությունը։ Սուրբ Կույսին կանչելը թույլ է տալիս տեսնել, թե ինչպես է Փրկչի անունը ներթափանցում մեր կյանք։

Ռիթմիկ կրկնության մակարդակը սերտորեն կապված է համրիչի օգտագործման հետ, որն օգնում է չափել աղոթքի ռիթմն ու կենտրոնանալ:

Վարդարանի խորհուրդներն անվանում են Փոքրիկ Աստվածաշունչ։ Դժվար է գերագնահատել այն դերը, որն ունեցել է վարդարանը կաթողիկէ հավատացյալների աստվածաշնչյան գիտակցության ձեւավորման վրա։ Դրանք հատկապես վերաբերում են Հիսուս Քրիստոսի մասին վարդապետությանը։ Ուրախության խորհուրդները նկարագրում են Աստծո Որդու մարդեղությունը եւ Հիսուսի մանկությունը։ Տրտմության խորհուրդները մեզ մոտեցնում են Նրա չարչարանքներին ու մահվանը։ Փառավորման խորհուրդները մեզ հիշեցնում են, որ մեր Հովիվը հարություն է առել։ Այնուամենայնիվ, Ավետարանը մնում է չգերազանցված։ Մկրտությունը Հորդանանում, Կանայում կատարված առաջին հրաշքը, Բարի Լուրի ավետիսը եւ դարձի գալու կոչը, Վերափոխումն ու Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատումը մեզ օգնում են տեսնել, որ Քրիստոսի խորհուրդների հարստությունը դեռեւս բաց է մեր առջեւ։

Վարդարանը՝ հայոց մեջ

Գերյ. Հ. Մեսրոպ Հայունին (Թոփալեան) Սբ. Յովհաննէս Պօղոս Բ Քահանայապետի՝ «Պսակ կուսին Մարիամու» առաքելական նամակի իր կողմից հայացուած տեքստի ներածականում գրում է, որ կան պատմական փաստաթղթեր, որոնք փաստում են, թէ հայերի մօտ Վարդարանի աղօթքը շատ սիրուած է եղել արդէն 16-րդ դարի վերջին քառորդից։ 17-րդ դարասկզբում Հայաստանում արդէն կատարուել են Աստուածամօրը նուիրուած թափօրներ, որոնց ընթացքում Վարդարան եւ այլ աղօթքներ են ասուել, յատկապէս, Սեբաստիայում, Բրգնիկում, որտեղ Վարդարանը նաեւ ընտանեկան սիրուած աղօթք էր։ Նախիջեւանի հայ կաթողիկէ տաճարում 1735-40թթ.-ից Աւագ Խորանը զարդարել է «Սբ. Վարդարանի Տիրամայր» կոչուող իւղապատկերը, որը նախատիպն է իտալական Պոմպեյ քաղաքի ուխտավայրի հրաշագործ սրբանկարի։ 1666-1735թթ. ընթացքում եւրոպական քաղաքներում հայերէն հրատարակուած գրեթէ բոլոր քրիստոնէականներում կայ Վարդարանի աղօթքը՝ չորս խորհուրդներով աղօթելու կարգով։ Վարդարանի աղօթքի հայոց մէջ տարածման հիմնական ալիքը սկսուեց Մխիթարեան Միաբանութեան հայրերի, յատկապէս, Մխիթար Սեբաստացու, ջանքերով։ Սեբաստացին մեծագոյն հայ մարեմասէրներից է, ով հայկական մշակոյթի մէջ ամրացրեց Վարդարանի աղօթքը եւ այլ մարեմական աղօթքներ։ 1735թ. Սեբաստացին հրատարակեց Վարդարանի առաջին հայերէն պատկերազարդ մատեանը, որը յետագայում վերահրատարակուեց եւս եօթն անգամ եւ հայ աշխարհում դարձաւ Սուրբ Գրքից եւ Նարեկից յետոյ ամենաշատ տպուած եւ պահանջուած գիրքը։ Հայոց մէջ «Վարդարան» բառի առաջին սահմանումը տուել է Մխիթար Սեբաստացին՝ հետեւեալ կերպ. «Պսակը (այսինքն՝ աղօթահամրիչը-խմբ.), որ 150 Ողջոյն Քեզ Մարիամ-ներէն եւ 15 Հայր Մեր-ներէն կը բաղկանայ, կը կոչուի Վարդարան, զոր բարեպաշտները կ՚աղօթեն ի պատիւ Կուսին։ Անոր համար «Վարդարան» կ՚անուանի, որովհետեւ ամէն մէկ «Ողջոյն Քեզ Մարիամ»-ի եւ «Հայր Մեր»-ի համար դրուած հատիկները իբր վարդեր պսակաձեւ շարուած են չուանի վրայ» (Պսակ Կուսին Մարիամու, Զմմառ, 2003)։

Նաիրա Բաղդասարյան
Տ. Հովսեփ քհն. Գալստյան

Թերթի հովանավորներ՝

Արհ. Տ. Ռաֆայել Արքեպս. Մինասյան՝ Առաջնորդ Կաթողիկէ Հայոց Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելյան Եվրոպայի

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Թերթի խմբագիր՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան՝
Հոգեւոր հովիվ՝ Մեծ Սեպասար, Ղազանչի, Բավրա, Սիզավետ եւ Սարագյուղ համայնքների
Հեռ.՝ 055698957

Տպագրության քանակ՝ 250, բաժանվում է անվճար

Գյումրի, Հայ Կաթողիկէ Առաջնորդարան, 2020թ.